№ 107 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 20

1906

ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 20 № 107

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

«Եղբ. Ս. Խ. և Ա. Գէորգեանց» Առևտրական Տունը յայտարարում է, որ իր գլխաւոր անդամներից՝ հանգուցեալ

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԳԷՈՐԳԵԱՆՑԻ

անբիծքը կատարվելու է ամսիս 19 և 20-ին, երեկոյեան ժամը 7-ին, Ֆրէյլինսկի փողոց, տ. № 10, իսկ յուղարկաւորութիւնը ամսիս 21-ին, առաւօտեան ժամը 10-ին նոյն տանից դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 2—3

Բագրատ և Քրիստափոր Խաչատրեան, Մարտիրոս և Բաղդասար Ստեփանեան Գէորգեանները, ամենածանր վշտով համակված, յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին, առաջին երկուսի սիրելի հօր, իսկ վերջիններիս հօրեղբօր՝

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԳԷՈՐԳԵԱՆՑԻ

եղերնական մահը, որ տեղի է ունեցել ամսիս 12-ին Թիֆլիսում։ Ամբիծքը կատարվելու է ամսիս 19 և 20-ին, երեկոյեան ժամը 7-ին, Ֆրէյլինսկի փողոց, տ. № 10, իսկ յուղարկաւորութիւնը ամսիս 21-ին, առաւօտեան ժամը 10-ին, նոյն տանից դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 2—3

Խուդի Սարգսեան Էլչիբէգեանցը և Կարապետ Սարգսեան Խօջամիրեանը ցաւօք սրտի յայտնում են իրանց բարեկամներին և ազգականներին, առաջինի աներոջ եղբօր, իսկ երկրորդի փեսայի՝

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԳԷՈՐԳԵԱՆՑԻ

անակնկալ մահը, որ տեղի է ունեցել ամսիս 12-ին Թիֆլիսում։ Անբիծքը կատարվելու է ամսիս 19 և 20-ին երեկոյեան ժամը 7-ին, Ֆրէյլինսկի փողոց տ. № 10, իսկ յուղարկաւորութիւնը ամսիս 21-ին, առաւօտեան ժամը 10-ին, նոյն տանից դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 2—3

ՍՕՖԻԱ ԳԷՈՐԳԵԱՆՑԸ սրտի խորին կսկիծով յայտնում է ազգականներին և բարեկամներին իր անմոռանալի տեգր՝

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԳԷՈՐԳԵԱՆՑԻ

չարագոյժ մահը, որը տեղի է ունեցել ամսիս 12-ին Թիֆլիսում։ Անբիծքը կատարվելու է այսօր, երեկոյեան ժամը 7-ին, Ֆրէյլինսկի փողոց № 10, իսկ յուղարկաւորութիւնը, վաղը ամսիս 21-ին, առաւօտեան ժամի 10-ին, նոյն տնից դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—1

ԵՂԲԱՅՐՔ
ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑՆԵՐԻ

Առևտրական խանութը սոյն ապրիլի 1-ից ՓՈԽԱԴՐՎԱԾ է Սիօնի փողոցից Ա. Մանթաշեանի նոր շինութիւնը, որ գտնվում է հին ծածկած բազազխանայի կից։

Մուտքը բազազխանայից եւ Մանթաշեանի շարքերից (Манташ. ряды) №№ 30, 31, 32, 33, 40 և 41.

(Կ. շ. ու.) առ. 9—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վարկաբեկ եղած. Վերջին տեղեկութիւններ՝ Մամուլ. Գիւղական ցաւերից. Յայտնի նշոյլը ծագում է. Աւտոնոմիա, ֆեդերացի և տեղական լայն ինքնավարութիւն. Փոքր ինչ ստատիստիկա. Սև պարոնի հանգոյցները բացէք. Տեղեկութիւններ գաւառից. Մի օֆիցէրի նամակը. Մաքրեցէք ասպարէզը. Թատրոն և երաժշտութիւն. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. Պետական Դումա. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՎԱՐԿԱԲԵԿ ԵՂԱԾ

I

Կանգնած ենք նոր զոհերի, նոր կողոպուտների առաջ։

Շուշի-Եւլախ ճանապարհը նորից բացել է մեր առաջ սարսափելի եղեռնագործութիւններ, որոնք յիշեցնում են անցեալ տարվայ յուսահատական աղէտի նախերգանքները։

Վարչութիւնը ամբողջ վեց-ութ ամիս գործելուց, խոստումներ անելուց, հրամաններ արձակելուց, զօրքեր խաղացնելուց, գիւղերը ռմբակոծելուց յետոյ չը կարողացաւ մի այնպիսի հասարակ և տարրական գործ աջողեցնել, ինչպէս է մեծ ճանապարհի ազատ և ապահով երթևեկութիւնը։

Ամօ՛թ, հազար ամօ՛թ։

Երբ մարդիկ գանգատվում են, թէ ճանապարհը անապահով է, նրանց պատասխանում են թէ դա չափազանցութիւն է, վախկոտութեան թելադրանք է, չարախօսութիւն է։

Իսկ այժմ ինչ պատասխան պէտք է տաք այն անմեղ զոհերի ազգականներին։ Ուր է ձեր խոստացած ապահովութիւնը։

Պատասխանեցէք։

II

Ամսի 14-ից մինչև այժմ Շուշի-Եւլախի ճանապարհը փակված է։

Միթէ դա տանելի բան է։

Մենք լաւ հասկանում ենք, որ դժբախտ դէպքեր աշխարհումս միշտ կարող են լինել։ Այդպէս էլ, կասեն, կարող էր պատահել այդ ճանապարհի հետ։

Բայց դա անհեթեթ առարկութիւն է։

Անհեթեթ է, որովհետև այդ ճանապարհի հարցը ամենևին նոր հարց չէ, որովհետև տեղական վարչութեան շատ լաւ յայտնի էին այդ ճանապարհի շուրջը ապրող տարրերի տրամադրութիւնները և ուրեմն վարչութիւնը և զօրքը պէտք է միշտ աչքի առաջ ունենային դժբախտութիւններ և պատրաստ լինէին նրանց առաջն առնելու։

Եթէ ճանապարհը պատահաբար փակվէր իսկ, մի քանի ժամից յետոյ նա պէտք է բացվէր։

Բայց անցնում են ժամեր ինչ ենք ասում օրեր և ճանապարհը փակ է ու հսկողութիւնից դուրս։

Տէր տիրական չը կայ։

Իսկ ձեր հարցափնդումներին պատասխանում են սառնաշունչ հեռագիրներով. «ձեռք են առնված միջոցներ»։

Միթէ դա դիւական ծաղր չէ

III

Աւազակը զինված շրջում է և կատարում, ինչ որ կամենում է։

Նրա վրա ույժ չունի վարչութիւնը։ Նրանից քաշվում է ինքը վարչութիւնը։ Բայց պէտք է 'գործ ցոյց տալ։

Եւ ահա ցոյց է տրվում։

Հրաման է արձակվում, որ խաղաղ ժողովուրդը յանձնէ իր մօտ եղած զէնքերը։ Ուղարկվում են և զօրքեր հրամանները կատար ածելու համար։

Վերցվում են զէնքերը։

Սակայն ինչ զէնքեր։

Ինքնապաշտպանութեան զէնքեր, խաղաղ ժողովրդի ապահովութեան գրաւական զէնքերը։

Արդիւնքը հոյակապ է։ Խաղաղ մարդը դարձել է աւելի ևս խաղաղ, կատարեալ մի ստրուկ, մի դիակ, իսկ գազանը, աւազակ մարդը, զինված ասպատակողը դարձել է աւելի անզուսպ, որովհետև նրա դէմ չը կայ այլևս ոչ մի հակառակող ույժ։

Վարչական իմաստութիւնը կատարեալ է։ Եւ յետոյ նա զարմանում է հետևանքների վրա։

Միթէ կարող էր ուրիշ կերպ լինել։

IV

Այստեղ այլևս հայ-Թուրքական ընդհարման մի հարց չէ մեր առաջ, այլ մի ուրիշ, սարսափելի երևոյթ։

Ոչ հայերը և ոչ Թուրքերը չեն ուզում կռւել, բայց կռւում են։ Նրանցից իւրաքանչիւրը դիմում է վարչութեան գանգատվելով ծանր իրականութեան վրա։ Բայց իրականութիւնը չէ փոխվում։

Ժողովուրդը շատ մեծ ուշադրութեամբ հետևում է վարչութեան բոլոր քայլերին և գործողութիւններին և չէ համոզվում, որ այդ վարչութեանը հարկաւոր է աւազակների զսպումը և խաղաղ տարրերի պաշտպանութիւնը։

Չէ համոզվում և չէ համոզվում։

Որովհետև իրականութեան փաստերը ապացոյցներ չեն տալիս մի այդպիսի համոզմունքի համար։

Վարչական կարգադրութիւնների մէջ կայ մի գունաւորութիւն, մի Թունաւոր գունաւորութիւն, որ արմատապէս վարկաբեկ է անում բոլոր կարգադրութիւնները։

Եւ դա է դժբաղդութիւնը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի, 19 մայիսի

Տխուր լուրեր են ստացվել այստեղ։ Այն, ինչից որ վախենում էինք, կատարվել է։ Սալթանբուլթի անտառում, Խաչէն գետի մօտերքում, գտնված են մի զեկուցման ասելով 8, իսկ միւսի ասելով 10 դիակ։ Յայտնի չէ թէ դրանք ինչ դիակներ են. ենթադրում են, որ ապաբաղդ ճանապարհորդների դիակներն են։

Հաղորդում են, որ Աղդամի և Փիր-Բուլաղի միջև տեղի է ունեցել հրացանաձգութիւն։ Կողոպտված են հայերի մի քանի ֆուրգոններ ապրանքով։

Վեվէրնը վերցրել է հայ գիւղացիներից 3000 րուբլի տուգանք իբրև պատիժ գերի ընկած Թուրքերի համար։ Նրան յանձնված է նոյնպէս հայ գերիների ազատելը Թուրքերի ձեռքից։

Խանքենդում սպանվել են մի հայ և մի Թուրք։

Ընդհանուր տրամադրութիւնը շատ ճնշող է։

—

Եւլախ—Շուշի տրակտի վրա տեղի ունեցած անցքերի մասին Թիֆլիսում ստացվել են հետևեալ տեղեկութիւնները.

1) Ջիվանշիրի գաւառապետի հաղորդագրութիւնը Գանձակի Նահանգապետին. «Մայիսի 14-ին Շուշու գաւառի սահմանի վրա, Խաչէնկա գետի մօտ, վեց Թուրքեր բռնութեամբ գերի վերցրին պօստի տրակտով կառքերով Շուշի գնացող 4 հայերի ու տարան Շուշու գաւառը։ Հայերից կողոպտված իրերի մի մասը գտնըված է»։

2) Գանձակի ժամանակաւոր գեներալ-Նահանգապետ Ալիֆտանի հեռագիրը Կովկասեան Փոխարքային. «Մայիսի 15-ին, կէս օրվայ մօտերը, Աղդամի պօստային տրակտի վրա Թուրքերը կողոպտեցին երկու հանրակառք և գերի են տարել 14 հայեր։ Գերիներին որոնելու համար կօզակներ են ուղարկված»։

3) Գանձակի Նահանգապետը հեռագրում է Փոխարքային, որ գերի տարված 14 հայերին որոնելու համար գաւառապետը ուղարկել է իր օգնականին, երկու պրիստաւներ, 3 վզվօդ ոստիկանական պահակներ։

—

Գանձակ, մայիսի 16-ին։

Գետաշէն գիւղացիք այսօր եկան գանգատվեցին գաւառապետ Աւալիանիին և խնդրեցին, որ քաղաքի և գիւղի հետ հաղորդակցող ճանապարհը ապահով դարձնելու համար փոխէ սարաժնիկների խմբի մէջ գտնվող երեք Թուրքերին, որոնց երկիւղից գիւղից քաղաք մտնելը վտանգաւոր է դարձել, կամ Թոյլ տայ գիւղացիներին հերթով հսկել Ղրիխաշտ կոչվող մասում, որը ամենավտանգաւոր ճանապարհի մասն է։ Գաւառապետը գիւղացիների խնդիրքը չը յարգեց... Երէկ գիշեր կայծակի արագութեամբ լուր տարածվեց, որ Թուրքերը ուզում են քաղաքիս հայոց մասի վրա յարձակվել։ Ժողովուրդը մի րոպէում իրարանցման մէջ ընկաւ, և ամէն մէկն սկսեց ինքնապաշտպանողական դիրքեր բռնել։

Երէկ, ամսիս 15-ին, Եւլախից—Շուշի գնացող երեք օմնիբուսներ, երբ հասնում են Քոչարլու և Քարվանդու կայարանի արանքը, ուղևորների առաջը կտրում են 15 հոգի մօսինի հրացաններով զինված Թուրքեր, հրացանները ուղղում են դէպի ուղևորները. հրամայում են չը շարժվել։ Ուղևորների մէջ է լինում մի մալական, Բերդման Կորպովսկիի առևտրական տան ներկայացուցիչը, ու վեց հայ տղամարդ և երեք կին։ Առաջին երկուսին կողոպտում են, հրէայից առնելով 117 ր. դրամ փողի քսակով. մուրհակները վերադարձնելով հրէային, հրամայում են ճանապարհը շարունակել, իսկ վերջին հայերին գերի վերցնելով տանում են հետները։ Հրէան և մալականը ճանապարհից վերադառնում են դէպի Եւլախ։ Գետաշէնցիք դիմեցին Աւալեանիին, և խնդրեցին, որ գիւղի ճանապարհի վրա դրած Թուրք պահապանների փոխարէն չէզոք ազգի պահապաններ նշանակէ։ Աւալեանին գոռալով ասել է, որ պահապանների ռոճիկը գիւղացիք բերեն գանձատուն ձգեն— այն ժամանակ ռուս կը նշանակի։

Այս րոպէիս Բանանցից լուր բերին, որ Թուրքերը յարձակվել են Բանանցու այգիներում բանող մշակների վրա։ Առ այժմս հաստատապէս իմացանք, որ սըպանված է Զաքար Շահ-Մուրադեանցը։ Գաւառապետի, հաշտարար միջնորդի և երկրորդ մասի պրիստաւի բացարձակ հայատեցութիւնը և Թուրքասիրութիւնը և զզվելի կողմնապահութիւնը—Թուրքերին ուղղակի երես և թև ու թիկունք է տալիս։

Ա. Սահակեան

—

Գանձակ, մայիսի 17-ին.

Հայ գիւղացիների կացութիւնը մեր գաւառում օրէցօր աւելի ու աւելի դժուարին է դառնում։ Դրա գլխաւոր պատճառն այն է, որ հայ գիւղացու համար զէնք ունենալն ու կրելը մահացու մեղք է համարվում, իսկ Թուրքին, իբրև քոչուրի, զէնք կրելու իրաւունքը տրվում է պաշտօնապէս։ Զինված հայը համարվում է «խմբի մարդ», յեղափոխական, որն արժանի է ամեն տեսակ հալածանքի, իսկ զինված Թուրքը, նոյն իսկ ակնյայտնի աւազակը, համարվում է քոչուոր, հաւատարիմ հպատակ, որը պէտք է ամեն կերպ հովանաւորվի, խնամվի... Մեր գաւառում այժմս օր չէ անցնում առանց սպանութեան, աւարառութեան, առանց Թուրքական նոր տմարդի գազանութեան։ Թուրք աւազակախմբերը, իրանց դէմ ուղղած հալածանքի նշոյլ անգամ չը նկատելով, գործում են բացարձակ, ազատ, համարձակ բառիս բուն մտքով։ Ամսիս 13-ին քշում են Փիր հայ գիւղի հանդից հինգ ձի։ Չովդար հայ գիւղի մօտով տանելիս նրանցից երկուսը խլվում են Թուրքերից չովդարեցիների ձեռքով։ Վերջիններս այժմս պատասխանատուութեան են կանչվում այն հրացանաձգութեան համար, որը նրանք յանդգնել են ունենալ Թուրքերի հետ. ինչ իրաւունքով են նրանք առանց Թոյլտուութեան զէնք կրում. ահա ինչու համար են խեղդելու չովդարեցիներին։ Երէքէջ հայ գիւղի հանդից ամսիս 14-ին անհետ կորել է տեղացիներից մի երիտասարդ։ Ամսիս 16-ին սպառազինված Թուրքերի մի խումբ մտնում է Բանանցի խաղողի այգիները ու հրացանաձգութիւն բանում այգիներում բանող գիւղացիների դէմ բոլորովին անսպասելի կերպով վերջիններիս համար. սպանվում է իր այգում բանող Զաքար Շահմուրադեանցը։ Բախտի բերմամբ գտնվում է մի զինված հայ երիտասարդ, որը բոլորովին մենակ կռւում է Թուրքերի դէմ, զբաղեցնում է նրանց հրացանաձգութեամբ ու այդպիսով հնարաւորութիւն տալիս այգիներում բանող անզէն մարդկանց ու կանանց ազատվել փախուստով։

Ղալուկեան

—

Շուլաւէր, մայիսի 18-ին

Մայիսի 14-ին, օրը ցերեկով, մեր գիւղի մէյդանում յանկարծ հրազէնի մի քանի անընդհատ պայթիւններ լսելի եղան։ Ժողովուրդն իրար գլխով անցաւ. շատերը փախչում էին սարսափի ազդեցութեան տակ. խանութները մի ակնթարթում սկսվեցին գոցվել, բայց շուլաւէրցի մի քանի արիասիրտ երիտասարդներ իսկոյն հրամայեցին կրկին բաց անել, յանդիմանելով խանութպանների նապաստակային վախկոտութիւնը։ Հրամանը իսկոյն կատարվեց, խանութները կրկին բացվեցին, ժողովուրդը խռնված անհամբեր սպասում էր իմանալ, թէ ինչ է պատահել, ինչ իրարանցում է դա։ Սկզբում ոմանք կարծում էին թէ Թուրքեր են արշաւում Շուլաւէրի վրա։ Կասկածը շուտով փարատվեց. դէպքի տեղը արագ սլացող կարիճ երիտասարդները անմիջապէս վերադառնալով հանգստացրին ժողովրդին, որ սալաքեցի կալուածատէր Ախունդովի աղան, Ջալալ աղան վէճի է բռնվել մի օս չափարի հետ և նրան բրաունի ատրճանակով վիրաւորել է ծանր կերպով. չափարն էլ Ջալալ-աղի կռւան է վիրաւորել Թրով։ Պատճառը եղել է այն, որ Բօրչալուում Ջալալ-աղան ծեծած է եղել չափարի եղբօրը, Խրամ գետի մօտ ձուկ որսալիս։ Չափարի ինքնասիրութիւնը վառվում է և սպառնում է պատեհ առիթի վրէժխնդիր լինելու բռնաւորից։ Առիթը ներկայանում է։ Ձիով Շուլաւէր գալիս Ջալալ-աղան մէյդանի ծայրում ենթարկվում է չափարի բացատրութեան եղբօրը ծեծելու վերաբերութեամբ։ Ջալալ աղան գրգռվում է և չը կարողանալով իրան զսպել, ատրճանակը չորս անգամ կրակում է նրա վրա։ Գնդակը ծակում է կուրը և աջ կողքից անցնելով մնում է մորթու տակ, կրծքի մօտ։ Վիրաւորված չափարն էլ Թուրն ածում է, որ հակառակորդի վիզը Թռցնէ ձիու վրայից, սակայն վերջինս նկատելով այդ՝ կռւան է դէմ անում, որ և վիրաւորվում է փափուկ մսից 2 վերշոկ խորութեամբ։ Ղալմաղալի վրա Թափվում են զինւորները և շրջապատելով պատրաստվում են Թուրք աղալարին գնդակահարելու։ Վրա է հասնում գաւառապետի օգնական Վօզնօսենսկին և արգելք հանդիսանում։ Չափարը բժշկելու նպատակով Թիֆլիս փոխադրելիս, ճանապարհին վախճանվում է։ Գործի քննութիւնը շարունակվում է։

Վաչագան

—

Շուլաւէր, մայիսի 18-ին

Մայիսի 16-ին, առաւօտեան ժամը 10-ին, Շուլաւէրում մի սոսկալի սպանութիւն տեղի ունեցաւ, որը շատ խոր ազդեց մեր հասարակութեան զգացմունքների վրա։ Պատճառը, ինչպէս լսում ենք, շատ հասարակ բանից է առաջ եկել։ Ոմանք պատմում են, որ կռւել են շուլաւէրցի երկու երիտասարդներ նրա համար, որ մասնաւոր խօսակցութիւնը սուր կերպարանք է ընդունել ծաղրելով միմեանց արտաները. ոմանք էլ պնդում են, թէ նրանցից մէկը առօրեայ հարցերի մասին տաք վիճաբանութեան մէջ են մտել։ Վերջը մէկը ատրճանակի երկու գնդակի հարուածից ընկնում է գետին և իսկոյն անշնչանում։ Հարուածողը դիմում է փախուստի։ Հասարակութիւնը և չափարները չեն կարողանում բռնել։ Մարդիկ են ուղարկված որոնելու համար։ Զօլօտարեվը և գաւառապետը մեր գիւղից բացակայ են։ Լսում ենք, որ գնդապետը սարերից շուտով գալու է տեղս և խուզարկութիւն է կատարելու անտերում, խլելով զէնքերը։ Իսկ եթէ ոճրագործը չը բռնվի, դժուար չէ գուշակել թէ մեր գիւղի գլխին ինչ փորձանք է գալու։

Մեզանում այժմ անձրևային եղանակներ են սկսվել։ Երէկ, մայիսի 17-ին կարկուտ տեղաց, բարեբաղդաբար քամու հոսանքից այլ ուղղութեամբ գնալով՝ մեր այգիների քիչ մասը փչացրեց։ Անձրևների գալու պատճառով գիւղացիները առ այժմ ընդհատել են «քիւքուրթ» և «ժանգառ» փչելով այգիների բժշկելու աշխատանքը։ Այս տարի արտերը և այգիները լաւ բերք են խոստանում Տայ Աստուած, յուսահատված գիւղացին մի քիչ ույժի գայ և իր հալալ քրտինքի վաստակը հալալ սրտով վայելելու բաղդն ունենայ։

Վաչագան

—

Հին-Նախիջևան, 13 մայիսի

Երէկ այստեղի փոխանորդ Լևոն վարդապետը Ս. Գէորգ եկեղեցում հոգեհանգիստ կատարեց անցեալ տարվայ նահատակների համար տխուր տարելիցի առիթով։ Եկեղեցին լիքն էր երկու սեռի աղօթողներով։

—

Պետական Դումայի Նախագահ, Մուրոմցեվը՝ խօսակցութիւն է ունեցել մի գեներալի հետ Ռուսաստանում կատարվող անցքերի մասին առհասարակ և Կովկասում, մասնաւորապէս։ Այդ խօսակցութեան ընթացքում Կովկասի վերաբերմամբ Մուրոմցեվը ասել է.

«Կովկասը անց է կացնում մի սարսափելի շրջան։ Մանաւանդ, որ նա զրկված է Դումային ներկայացուցիչներ ուղարկելով իր ցաւը մեզ, այսինքն ամբողջ Ռուսաստանին, յայտնելու հնարաւորութիւնից։ Հակառակ մեր տկարութեան, հակառակ այն ջանքերին, որով ուզում են Դուման ոչնչութեան հաւասարեցնել, մենք կարող կը լինենք պատասխանատուութեան ենթարկել Կովկասը «պահպանողներին» և «խաղաղացնողներին»։

«Հայ և վրացի կանանց աղաղակները մեր, այսինքն Ռուսաստանի ներկայացուցիչներիս սրտում տեղ ու արձագանք է գտնում։ Մեզ վախեցնում են այն բանով, որ եթէ կռիւն սկսվի, մենք կը յաղթենք։ Բայց մենք չենք վախենում ամենևին և մենք կը գնանք այն ճանապարհով, որ մենք ընտրել ենք։

«Մենք ուրիշ բանից ենք վախենում։

«Մենք վախենում ենք, որ ազգերից մէկը, թէկուզ լինի նա ամենափոքրիկը, մեզ կը մեղադրէ Թշնամութեան և աչառութեան մէջ»։

Գեներալը ասում է, որ երբ թէ կառավարութիւնը ցանկանում է Կովկաս ուղարկել մի բարձրաստիճան զինւորական, որպէս զի գեներալ-Նահանգապետների գործողութիւնները քննութեան ենթարկէ։

«Թող ուղարկէ, պատասխանում է Մուրոմցեվ. բայց մենք, այսինքն Դուման, Կովկաս պէտք է ուղարկենք մեր մարդը, որը աւելի արժանաւոր և աւելի արդարադատ կը լինի, քան կառավարութեան զինւորականը»։

Այո, դժբաղդ Կովկասը սպասում է անհամբեր այդ առաքեալին, որպէս զի նրա առաջ բաց անէ իր զարհուրելի վէրքերը, որոնք սարսափելի են մանաւանդ նրա համար, որ դիտմամբ են փորված մեր գեղեցիկ երկրի մարմնի վրա։

Կովկասի խաչը շատ ծանր եղաւ, նրա նահատակութիւնը՝ շատ անսահման։ Թող գայ առաքեալը բերելու համար մեզ ոչ միայն իսկական խաղաղութիւնն ու իսկական արդարութիւնը, այլ այն Թանկագին հաւատքը, թէ Մայր-Ռուսաստանը մեզ չէ մոռացել, թէ մենք նրա համար խորթ... զաւակներ չենք ամենքին կրել տալով իրանց գործերի արժանաւոր հատուցումը...

ՄԱՄՈՒԼ

Այրիացած քահանաների ամուսնութեան հարցը, որ վերջերս յուզվում է հայոց հոգևորականութեան մէջ, այժմ սկսել է արծարծվել և ռուսաց կրօնական ու աշխարհիկ մամուլի մէջ։ «Колоколъ» լրագրի մէջ, Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Սերգին սաստիկ հակառակելով քահանաների կրկնամուսնութեան, «Страна» լրագիրը (№ 64) իր կողմից ցոյց է տալիս, որ այրիացած ռուս հոգևորականների վիճակը արժանի է ամենախորին կարեկցութեան և արդահատութեան և բազմաթիւ օրինակներով ցոյց է տալիս թէ այդ կրկնամուսնութիւնը անյետաձգելի պահանջ է դարձել։

*

Նոյն «Страна» լրագրի մէջ մի պարոն Ա..-լի խօսելով Վրաստանի աւտոնոմիայի մասին, այն միտքն է յայտնում, որ եթէ այդ հարցը ընդդիմադրութեան է հանդիպում ռէակցիօներների կողմից, յամենայն դէպս վրաց եկեղեցու աւտոկեֆալութեան (ինքնագլխութեան) հարցի դէմ ոչինչ խօսել չէ կարելի։ Վրացի ժողովուրդը ահագին նշանակութիւն է տալիս այդ հարցին և նրա լուծումը, անկասկած, մեծ անդորրացումն առաջ կը բերէ վրդովված և յուզված մտքերի մէջ Վրաստանում, որի համար կրօնի և մայրենի եկեղեցու հարցը դատարկ ձայն չէ, որովհետև այդ եկեղեցին ժողովրդի բազմադարեան տանջանքներին և ուրախութիւններին վկայ է եղել։

Հեռագիրները արդէն յայտնեցին, որ վրաց եկեղեցու աւտոկեֆալութեան հարցը առ այժմ լուծվում է կիսով չափ. վրաց կաթողիկոսական աթոռը վերահաստատվում է։ Կաթողիկոսը կը լինի վրացի, բայց նրա տեղապահը ռուս։ Վրաց վերջին կաթողիկոսը՝ Անտոնի II էր։

*

«Страна» լրագրի № 65-ի մէջ Թիֆլիսից գրված մի նամակ բացատրում է թէ ինչպէս օրէց օր ակնյայտ է դառնում, որ Կովկասեան ինտելլիգենցիան անպատրաստ է քաղաքական կեանքի համար։ Այստեղ չէ եղել այն դպրոցը, որ Ռուսաստանը ունեցել է ի դէմս զէմստվոյին հաստատութիւնների և որից դուրս եկան ժողովրդական գործիչները։ Դա է պատճառը, որ ազատութեան կուսակցութեան իդէալները և տակտիկան վատ են պատուաստվում Կովկասում։ Քիչ դեր չէ խաղում և ազգութիւնների փոխադարձ անվստահութիւնը։ Ամեն մի կուսակցութիւն, այդ Թւում և Թիֆլիսի կադէտների կուսակցութիւնը, կազմակերպվելիս, համախմբում է իր շուրջը նախամեծարապէս որոշ ազգութեան անձանց. այնպիսի տպաւորութիւն է ստացվում, որպէս թէ գումարվում են նացիօնալիստներ, որոնք հագնում են ժողովրդական ազատութեան [illegible]։ Վրացիներից շատերը, որոնք յարել էին կադէտային կուսակցութեան, անջատվեցին նրանից և կազմեցին առանձին դէմօկրատիական կուսակցութիւն։ Տարաձայնութիւնը ծագեց աւտոնոմիայի հարցի առիթով. վրացիները պաշտպանում էին ազգային աւտոնոմիան, հայերը—համակովկասեան աւտոնոմիան, ցոյց տալով միաժամանակ կեանքի կուլտուրա-ազգային կողմերի համար էկս-տէրրիտորեալ (ոչ հողային) աւտոնոմիայի ձևերը։ Մեզ մօտ կազմվել է և արմատական կուսակցութիւն, որ ձգտում է բլոկ կազմել սահմանադիր-ռամկավարականների և վրացի-ֆեդերալիստների հետ։ Դրանից յետոյ յօդուածագիրը յայտնում է, որ սօցիալ-դեմօկրատները լուրջ շանսեր ունեն, (ինչպէս, իսկապէս և արդարացան), բայց ասում է, որ կիսով չափ շանսեր ունեն, և գտնում է, որ եթէ սօցիալ-դեմօկրատները բլոկ կազմէին հայ յեղափոխական Դաշնակցութեան հետ, որի ծրագրի մէջ մտնում է և սօցիալիզմը, այն ժամանակ նրանց աջողութիւնը կարելի էր ապահոված համարել (մենք տեսանք, որ առանց այդ բլոկի էլ սօցիալ-դեմօկրատները աջողութիւն ունեցան, կամ աւելի ճիշտ կը լինէր ասել, Դաշնակցութեան յայտնած բոյկոտը օգնեց մեծապէս նրանց)։

Դնելով այդ բլոկի հարցը, յօդուածագիրը այսպէս է բնորոշում սօցիալ-դեմօկրատների և հայ դաշնակցականների յարաբերութիւնները։ «Դաշնակցութիւնը», ասում է նա, բոյկոտ յայտարարեց Պետական Դումային։ Սակայն եթէ այդ բոյկոտը չը լինէր, դժուար թէ բլոկ կազմվէր նրա և սօցիալ-դեմօկրատների մէջ, ի նկատի ունենալով, որ այդ երկու կուսակցութիւնները անվստահաբար են վերաբերվում միմեանց։ Այդ անվստահութիւնը ծագել է հայ-Թուրքական ընդհարումների ժամանակից։ Սօցիալ-դեմօկրատները համարում էին Դաշնակցութեան՝ Թուրքերի հետ կռւելու ձևը նացիօնալիստական, գտնելով, որ գործողութեան միակ կանոնաւոր եղանակը կը լինէր, համերաշխութիւն հաստատել հայ և Թուրք աշխատաւոր մասսաների մէջ, բուրժուազիայի և կառավարութեան պրովօկացիայի դէմ կռւելու համար։ «Քանդենք առաջ ընդհանուր ույժերով—ասում էին սօցիալ-դեմօկրատները—Բաստիլիան, իսկ յետոյ ընդհանուր ույժերով կը կործանենք և Թուրքական Վանդեան»։ Հայ յեղափոխականները առարկում էին, թէ գործերի դրութիւնը ստիպում է նրանց մտածել ամենից առաջ հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան մասին։ Ծագած անվստահութիւնը առաջ բերեց տարաձայնութիւններ և լրագրական բանակռւի վերածվելով, աւելի ևս սրեց յարաբերութիւնները։

*

Լեհաստանում, ինչպէս յայտնի է, ընտրութիւնների ժամանակ, յաղթեցին Նացիօնալ-դեմօկրատները (ազգային-ռամկավարականները)։ Այդ կուսակցութեան մասին մի գաղափար տալու համար առաջ ենք բերում էական մասերը այն կոչի, որ նրա ականաւոր գործիչները և Պետական Դումայի անդամները հրատարակել են.

«Երկիրը տուել է իր քաղաքականութեան ղեկը ազգային-ռամկավարական կուսակցութեան ձեռքը։ Յաղթեց ազգային ինքնուրոյնութեան քաղաքականութիւնը, որ յենվում է այն անխախտելի հաւատի վրա, որ ունի ազգի ոյժերի վրա, ուստի և երկիւղ չէ կրում ծանր կուից. յաղթեց դեմօկրատիական միտքը, որ ստիպեց մեզ մտնել ժողովրդի մէջ, աշխատել նրա հետ և նրա համար։ Կուսակցութիւնը իր յաղթութիւնը պարտական է ժողովրդական ձայներին և շեշտում է, որ «լեհ գիւղացին, արհեստաւորը և բանուորը գնացին դէպի սափորը իբրև երկրի քաղաքացի, յանուն իր կարիքների ամբողջութեան, որի հետ կապել է իր մօտաւոր ձգտումները, անուրջները լաւագոյն վիճակի մասին. այդ ընտրութիւնների պատմութեան մէջ չը կայ հակադրութիւն ժողովրդի—ազգին, դասակարգի շահերի—ընդհանուր շահերին։ Եւ գիտակցելով իր վրա դրված ազգային ներկայացուցչութեան ահագին պատասխանատուութիւնը, կուսակցութիւնը հետևեալ ինքնորոշումն է արտայայտում.

«Մենք—ազգային ինքնուրոյնութեան կուսակցութիւն ենք։ Լեհ ազգը հիմնում է իր գոյութիւնը ոչ միայն ցեղական, լեզուային և կուլտուրական առանձնայատկութիւնների վրա, ոչ, նա քաղաքական ժողովուրդ է, որի անհատականութիւնը իր արմատն ունի պատմական խորքին և ամուր աւանդութիւնների մէջ, իր սեպհական ներքին կազմութեան մէջ. նա մի ժողովուրդ է, որ ունի այն բոլոր ոյժերը և յատկութիւնները, որոնք հարկաւոր են ինքնակառավարութեան համար և նրա համար, որ ինքն լինի իր գլխի տէրը։ Այդտեղից բղխում է ներկայ ժամանակի համար մեր գլխաւոր ձգտումը—ձեռք բերել մեր երկրի պետական—իրաւական առանձնացումը, Լեհաստանի աւտօնօմիան»։

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱՒԵՐԻՑ

I

Մեզ՝ գաւառական թղթակիցներիս վիճակված է գրելու այն գազանութիւնների մասին, որոնց սարսափած ականատես ենք լինում. այնքան ենք գրել սպանութիւնների տեսակների մասին, որ ընթերցողի զգացմունքը բթացրել ենք. ինչ անենք, այնպիսի ժամանակում ենք ապրում, որ լայնածաւալ ռուս պետութեան մէջ մի մատ գետնի տեղ չը մնաց, որ արիւնով շը ներկվի, արիւնով չոռոգվի. մի այնպիսի պատմական ժամանակ է, որ հազարաւոր մարդկանց տասնեակ տարիների արիւնքրտինք աշխատանքը մի խօսքով, մէկ բոպէում ոչնչացվում է...

Հաղորդակցութեան յարմարութիւններից զուրկ լինելու պատճառով, հնարաւորութիւն չունեմ պատահած դէպքերի մասին իսկոյն տեղեկութիւն հասցնել, բայց լաւ է ուշ, քան երբէք։ Նախկին թղթակցութեանս մէջ գրել էի սարի Աւդլլի անյայտանալու մասին. այժմ ինչպէս եկող Թուրքերն են պատմում, չորերը գտել են արիւնոտ աղուէսի բնում, իսկ դիակը մաս-մաս կտորել և ջուրն են ածել. այս Աւդըլլի ազգականներից չորս հոգի զինված՝ իմանալով որ սպանող երկու եղբայրներն էլ սարից պիտի գան, ճանապարհը կտրել են՝ վրէժ հանելու նպատակով, և «Մանգաղ» Թալի մօտ առաջները կտրելով՝ անյայտացրել են. Թող ընթերցողը երևակայէ թէ ինչ սարսափելի տանջանքների պիտի ենթարկեն Աւդլլին սպանողներին. Նոյն ճանապարհից մի քանի բոպէից յետոյ անցնողները լսել են, որ մի խոր ձորի մէջ գայլի վիրաւորած տաւարի նման բառաչում են։ Ալփոյուտ Թուրք գիւղում մի մարդ են սպանել։

«Հայաթ» և «Իրշադ» թերթերի խմբագիրները երկու հայերի մահմեդականութիւն ընդունելու համար փոխանակ ուրախանալու և երկինք թռչելու, լաւ կը լինէր իրանց հարազատ Թուրք մահմեդականների համար դիմէին այնպիսի միջոցների, որոնցով կարելի լինէր յիշեալ գազանական սպանութիւնների թիւը սահմանափակել. մինչ թէ երևակայութիւն չէ լուսաւորված մարդու համար կրօնական հարցերով զբաղվել, էլ ինչ՞ պիտի տարբերվել ազէտներից. լուսամիտ մարդիկ աշխատում են մարդկութեան համար պիտանի անդամներ պատրաստել, որոնց պարտականութիւնն է քարոզել բոլոր ազգերի մէջ, առանց խտրութեան, սէր, եղբայրութիւն և հաւասարութիւն. գաղափարական մարդու համար ազգ և հայրենիք չը կայ.... Ի՞նչ հասկացաւ կրօնափոխ հայն իր հին կրօնից կամ ինչ մխիթարութիւն գտաւ նորումը. ոչինչ. երբ որ մի գործողութիւն կատարվում է անգիտակցաբար, մեքենաբար՝ մարդ նրանից ոչ պիտի ուրախանայ և ոչ էլ տրտմի, այլ պէտք է միջոցներ դիմել, որ իւրաքանչիւր ոք իր արածը հասկանայ։

Տգիտութիւնը Թուրքերի մէջ եղած մարդկութեանը արժանի բոլոր յատկութիւնները կաշկանդել է, նրան կուրացրել է. 44 հազար Թուրք բնակիչ ունեցող գաւառը միայն երկու ալեքսանդրեան նորմալ ուսումնարաններ ունի, մի քանի հարիւր աշակերտներով, որոնց մի մասը դարձեալ հայեր են։ Ղազախի Թուրք գիւղերը կրթված երիտասարդների կողմից անպատուհ դէմք են ներկայացնում։

45 տարի սրանից առաջ ճորտերի ազատման մանիֆէստը եղաւ, բայց Թուրքերը նոյն դրութեան մէջ մնացին, ինչպէս կային առաջ. ինչպէս առաջ մշակում էին աղաների և բէկերի հողերը «բահրով», նոյնն անում են և ներկայումս. Թուրք հասարակ ժողովուրդը կեղեքվում, շահագործվում է աղաների և բէկերի ձեռքով. վերջինները նայում են իրանց հողերի վրա ապրող գիւղացիների վրա մատերի արանքով, գիւղացիների տնտեսական կեանքի մէջ ոչ մի փոփոխութիւն չեն կատարում, սրանց պարազիտական անձը անընդունակ է յանուն արդարութեան մի որևէ զիջողութիւն անել խեղճ գիւղացիներին, սրանցից շատ դժուար է գաղափարական մարդ սպասել. Թուրք գիւղացին իր լճացած դրութիւնից չի շարժվում, չունի իր մէջ կրթված երիտասարդներ, որոնք կարողանային արտօնեաների կամայականութիւնները սանձահարել։

Թուրքերի մէջ տգիտութեան գլխաւոր հովանաւորողները մօլլաներն են, որոնք հասարակ գիւղացուց զանազանվում են նրանով, որ փոքրի շատէ գրագէտ են. սրանք աւելի չարիք են պատճառում ժողովրդին, քան հոգեկան մխիթարութիւն. մի գլխաւոր յատկութիւնն էլ այն է, որ կարողանում են ֆանատիկոս ժողովրդի վայրենի կրքերը բոպէապէս գրգռել։ Շատ աշխատեցին ներկայ ընդհարումներին կրօնական պատերազմի բնաւորութիւն տալ, բայց չաջողվեց. սրանից մի օրինակ. երբ տասնեակ հազարներով զանազան գաւառներից Թուրքեր էին հաւաքվել հայ գիւղերի վրա յարձակվելու, Շամշադինում առաջ է գալիս մօլլան, մի ձեռքով բռնում է մի հին ժանգոտված Թուր, միւսով՝ ղուրան, և ամենքին հաւատացնում է, թէ երկուսն էլ անցեալ գիշերը երկնքիցն է ստացել և սրանց զօրութիւնը այնքան շատ է, որ իրանք բոլոր հայերին պէտք է ջարդեն, կոտորեն, և գիւղերը ոչնչացնեն, իսկ իրանց կողմից ոչ մի զոհ չէ լինելու. Թուրքերը հաւատում են և առաջ շարժվում. առաջին դիրքին երբ մօտենում են, հայերը յետ են նահանջում, Թուրքերը այստեղ բոլորովին հաւատում են մօլլայի ասածներին, իսկ մօլլան ամենքից առաջ է գնում. բայց մի քիչ առաջ գնում են թէ չէ, տեսնում են, որ հայերով շրջապատված են. հրացանները բացվում են թէ չէ՝ առաջին գնդակը մօլլի կոկորդը կտրում է, սուրը մի կողմն է ընկնում, ղուրանը՝ միւս. Թուրքերը պանիկական երկիւղով փախչում են։ Բռնութիւններ էին գործում և աղաներն ու բէկերը աղքատ գիւղացու վրա, մորթում էին մի հատ եզը, կովը, ոչխարները և ասում էին թէ երբ հայերին գիւղերից քշենք՝ մէկի փոխարէն տասը վերցրէք։ Քանի դեռ Թուրք գիւղացին այսպէս տգէտ է, դեռ քանի սրանց ղեկավարները կը լինեն աղաները, բէգերն ու մօլլաները, սրանց մէջ անպակաս կը լինեն սպանութիւնները, աւազակութիւնները և գողութիւնները։

II

Կիրակի ամսիս 6-ին, մի խումբ մեր գիւղացիներից ուրախ-ուրախ ինձ մօտ եկան, որոնցից մի սպիտակահերը ծոցից հանեց մի ծրար և տալով ինձ, ասաց. «Տէրտէր, շուտով կարդա, Թագաւորի մանիֆէստ է, երեք տարվայ հարկը մեզ բաշխել են, Ղօշղոթանում գիւղացիք ուրախութեան մէջ են»։ Ծրարը գործակալից էր. բացի, գրած էր նոյեմբերի 3-ին մանիֆէստը, որտեղ գրված էր ռուսերէն լեզուով, թէ 1906 թ. յետ գնման վճարի կէսը և 1907 թ. էլ ամբողջը գիւղացիներից չէ պահանջվելու. սխալ հասկացնելով ժողովրդին, բաւականին ուրախացրել էին. այս մանիֆէստից կօգտվէին Թուրքերը, եթէ աղաների և բէգերի հողերը գնած լինէին բանկի միջոցով. բայց Թուրքերը յիշեալից ոչ մի տեղեկութիւն չունեն և ծով գիտէ աղաներն ու բէգերն ինչպէս կը բացատրէին այս մանիֆէստը։

III

Կայծակի արագութեամբ լուր տարածվեց մեր գիւղերում, թէ զինւորական դրութիւնը վերացել է և թէ պ. Լեվիցկին իր զօրքով հեռացել է. ամենքը սարսափի և երկիւղի մէջ ընկան, որովհետև ամենքն էլ այնպէս են համոզված, թէ պ. գեներալի հեռանալուց յետոյ անմիջապէս սկսվելու են խառնակութիւնները և ներկվելու են մեր դաշտերը արիւնով. երկու ազգերն էլ յոգնել են, երկուսն էլ խաղաղութիւն են պահանջում. նոր են հասկանում խռովութիւնների կոստաբեր լինելը. հազարներով տուգանք են պահանջում քաղցած և մերկ գիւղացիներից. երկու ազգութիւնն էլ սրտով փափագում էին ունենալ մի այնպիսի բարձր պաշտօնեայ, որ վերին աստիճանի անկողմնապահ և անաչառ լինի դէպի երկու ազգութիւններն էլ. յիշեալները և աւելի լաւ յատկութիւններ ամփոփված են գեներալ Լևիցկու անձնաւորութեան մէջ, որի համար Ղազախի հայերը, Թուրքերն ու պօլիցիան հեռագրով դիմել են Փոխարքային, որ գեներալ Լևիցկուն չը տեղափոխեն։

Կրդէնցիներին սպանող Թուրքերից մէկին բանտարկեցին, մնացած երեքն էլ յանձնելու էին իշխանութեանը ամսիս 8-ին։

Մելիքսեդէկ քահանայ

Բաղանիս.

ՅՈՅՍԻ ՆՇՈՅԼԸ ԾԱԳՈՒՄ Է

Թէ ինչ տխուր դեր կատարեցին Թուրք բանւորութիւնն ու գիւղացիութիւնը հայ-թուրքական ողբալի ընդհարումների մէջ—յայտնի է ամենքին։

Մարդիկ, որոնք շահագործութեան, տանջանքի մի և նոյն լծի տակ են կռացած, մարդիկ, որոնք նոյն շահերն ունեն ու նոյն ակնկալութիւնները, մարդիկ, որոնք իրանց ամենօրեայ տառապանքով եղբայրացած՝ բնականաբար պէտք է մղվէին իրար հասկանալու, իրար սիրելու, իրար աջակցելու,—ճիվաղ գործ սադրանքի մի զարհուրելի խաղով՝ դարձան միմեանց անողոք դահիճներ։

Մարդկային պատմութիւնը շատ ողբերգական ու ամբոստացուցիչ փաստեր է արձանագրել, բայց հայ-թուրքական ընդհարումները՝ իրանց հսկայական ոճիրով, այդ պատմութեան ամենամռայլ էջերը պիտի կազմեն։

Հետևաբար, նրանք՝ որոնք գիտակցում էին, հրամայողական պարտականութիւնն ունէին դադարեցնելու այդ անկարելի ոճիրը։

Եւ ծվքեր ամենից աւելի պիտի գիտակցէին այդ հրեշութիւնը, եթէ ոչ նրանք, որոնք կանգել են իսկական եղբայրութեան, իսկական արդարութեան, իսկական ազատութեան հողի վրա, նրանք, որոնք իրանց վրա են վերցրել հակառակ նախատինքների ու հալածանքների, առանց կրօնի, ցեղի հայրենիքի խտրութեան բոլոր զրկվածների, բոլոր հալածվածների պաշտպանութիւնը։

Ահա ինչու համար հասարակական ամեն թունաւոր նախապաշարմունքներից, բուրժուական ամեն գեռնաքարշ ու ճղճիմ շահերից ազատ ու բարձր, երկու եղբայրասպան ժողովուրդների ընկերավարական կուսակցութիւններն է, որ կոչված էին խաղաղութեան ու հաշտութեան գաղափարը մեխել գործաւորական և գիւղական պրօլետարների ագէտ, մոլորված ուղեղի մէջ, դասակարգային գիտակցութեան, համերաշխ ու եղբայրական գործունէութեան կրակը վառել նրանց տրտում, աւերակ ու ամայի սրտում։

Հայ սօցիալիստը արիաբար իջել է ասպարէզ, գործում է խօսքով և մամուլով։ Նա պիտի նետէ եղբայրութեան կամուրջը երկու ժողովուրդների միջև, որպէս զի նրանց նոյն շահերն ու նոյն իղձերն ունեցող տարրերը, բանւորութիւնն ու գիւղացիութիւնը, հաղորդակցեն միմեանց հետ և վերջապէս գիտակից, ու իրանց անխախտ միութեամբ հզօր, որպէս մի մարդ կանգնեն սպառնալից երկու ժողովուրդների հարստահարող, շահագործող, ազգայնական ձգտումներով սպականված փոքրամասնութեան, ինչպէս և բանակապական դաւերի ամբարիշտ հերոսների առաջ, և գոռան.

—Բաւական է։

Բայց այդ փրկութեան կամուրջի միւս եզերքը, Թուրք սօցիալիստը, թէպէտև գոյ, չէր ցոյց տալիս գործունէութեան ու կեանքի նշան։ Նա չունէր իր սեփական մամուլը, նա չէր իջնում, իբր հայ ընկերոջ նման, հրապարակախօսութեան դաշտը, նա չէր հնչեցնում իր ցասկոտ, մարտական ու աւետաբեր ձայնը, Թուրք երկար ու կարճ քաղաքացու կղերականութեան անբանացումի, մեկուսացման և գրգռումի պաշտուքների մէջ։

Եւ դա, մեզ՝ խաղաղութեան, ազատութեան, սօցիալական վճռական արդարութեան յաղթանակի երկրպագուներիս և զինւորներիս լցնում էր մտահոգութեամբ և դառնութեամբ։

Բայց ահա գալիս է վերջապէս նա, Թուրք սօցիալիստը, գալիս է ճշմարտութեան ու առողջ բանականութեան հզօր խօսքը բերանին։

«Իրշադի» իմաստակ գրիչներից մէկը՝ զբրզված կրօնական շահերից—ինչ Թանկագին շահ—Մարօկի աւարառութեան գործում համամիտ ու մեղսակից ցոյց տուած լինելով Բեբելին, Թուրք սօցիալիստը գալիս է այդ իմաստակին մի գրքեցուցիչ դաս տալու նոյն «Իրշադ»-ի էջերում։

Նախ ասում է, որ այդ մաքով-աղքատը չը գիտէ թէ ով է Բեբելը։ Յետոյ երկար ու գեղեցիկ բացատրում է թէ ինչ բան է գաղութային քաղաքականութիւնը, որի դէմ են բոլոր սօցիալ-դեմօկրատները։ Մարօկի հարցի շուրջը Բեբել, Գերմանիայում, Ժօրէս, Ֆրանսիայում, մեզ են Թունդ ազիտացիա, երկու երկրների կապիտալիստական շահատակող քաղաքականութեան դէմ։ Եւ իր յօդուածը վերջացնում է այս խօսքերով.

«Նախ կարդա Մարօկի մասին թէ Բեբելի և թէ Ժօրէսի ճառերը և յետոյ նրանց կեղտոտիր «համաքրիստոնէութեան» արատով։ Ինչպէս երևում է դու տեղեկութիւն չունես այն ճառերից, որ արտասանեցին նախանցեալ տարի սօցիալիստական համաժողովում Եապօնիայի սօցիալիստական կուսակցութեան ներկայացուցիչն ու Ռուսաստանի սօցիալ-դեմօկրատ կուսակցութեան ներկայացուցիչը՝ Պլեխանով, պատերազմի ժամանակ, միմեանց ձեռք սեղմելով։ Սօցիալ - դեմօկրատի վրա համաքրիստոնէութեան արատն ես շպրտում, Եապօնիայի սօցիալ-դեմօկրատներն էլ արդեօք քրիստոնեայ են։ Ո՛չ, պարոն։ Համասլաւօնականութիւն, համաքրիստոնէութիւն, համարմենականութիւն, համիսլամութիւն, համահրէութիւն և ուրիշ համ...իզմներ միայն բուրժուական իդէօլօգների, կուլտուրի խակ ցնորքներն են և անվայել է աշխատաւորների ու զրկվածների վրա այդպիսի զրպարտութիւն նետել!..

Ճիշտ է երկրագնդի բոլոր սօցիալ-դեմօկրատներն էլ ունեն մի «համ...իզմ». բայց դրան «համաքրիստոնէութիւն» չեն ասում, այլ «համաշխատաւորական» կուսակցութիւն։

Այժ թէպէտև մի քիչ ուշ, բայց ծագում է յոյսի արշալոյսը... Ողջունենք նրան փառահոութեամբ և հրճուանքով...

Տ. Զ.

ԱՒՏՕՆՕՄԻԱ, ՖԵԴԵՐԱՑԻԱ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԼԱՅՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

III

Մեր նախորդ յօդուածով ցոյց տալով աւտօնօմիայի և ֆեդերացիայի էութիւնը և նրանց տարբերութիւնը, պէտք է ասենք, որ հարցը չափազանց խճճվում է, երբ նրանց հետ կապում են մեծամեծ յոյսեր կամ երևակայական երկիւղներ։ Շատերը կարծում են, որ երբ մի երկրի, մի նահանգի կամ շրջանի տրվի աւտօնիական կամ ֆեդերատիվ կազմութիւն, դրանով նա լիակատար անկախութիւն ձեռք կը բերէ։ Ուրիշները պնդում են, որ աւտօնօմիական կամ ֆեդերատիվ կազմութիւնը կոչնչացնէ պետական միութիւնը։ Հէնց այդ է գլխաւոր առարկութիւնը աւտօնօմիայի հակառակորդների, թէ Ռուսաստանը կարող է բաժան-բաժան լինել, եթէ նրա զանազան մասերը ստանան աւտօնօմիա և այդ հզօր ու լայնածաւալ պետութիւնը կարող է ոչնչանալ։ Բացի դրանից հակառակորդները մտասակար են քարոզում աւտօնօմիան և այն առարկութեամբ, թէ նա գժտութիւն, թշնամութիւն է սերմանում երկրի զանազան ազգութիւնների մէջ, ներքին կռիւ է առաջացնում և իբրև օրինակ ցոյց են տալիս Աւստրիան, ուր պետական կեանքը անկանոն ընթացք է ստացել, թէև նրա զանազան մասերը աւտօնօմիական կազմութիւն ունեն։

Դրանք են այն գլխաւոր առարկութիւնները, որ ռուս «հայրենասէրները և կենդրօնականները» անում են աւտօնօմիայի դէմ։

Այդ առարկութիւնները սակայն անհիմն են, ոչ միայն աւտօնօմիայի, այլ նոյն իսկ ֆեդերացիայի վերաբերմամբ, որը, ինչպէս բացատրեցինք, աւելի մեծ անկախութիւն է տալիս, քան աւտօնօմիան։ Թէ աւտօնօմիայի գաղափարը չէ կարող խախտել պետական միութիւնը և վնասել նրան, դրա փառաւոր ապացոյցն է Արևմուտքի քաղաքական փորձը, այնպիսի ֆեդերատիվ պետութիւններ, ինչպէս Շվէյցարիան, Գերմանիան, Ամերիկայի Միացեալ-Նահանգները և այն երկիրները, ինչպէս բրիտանական կայսրութիւնը, որոնք թէև ֆեդերատիվ չեն, բայց լայն կերպով իրագործել են օրէնսդրական ապակենտրոնացման գաղափարը։ Այդ օրինակները ցոյց են տալիս, որ նոյն իսկ ֆեդերատիվ կազմութիւնը, որ թոյլատրում է ունենալ պետութեան առանձին մասերում ոչ միայն տեղական օրէնսդրական ժողովներ, այլ և կենտրօնական իշխանութիւնից անկախ կառավարութիւններ, ամենևին չէ խախտում պետութեան միութիւնը և խոչընդոտ չէ հանդիսանում նրա հզօրութեան զարգացման։ Ուրեմն էլ առաւել տեղիք չը կայ երկիւղ կրելու շրջանային աւտօնօմիայից, որ դեռ չէ նշանակում ֆեդերատիվ կազմութիւն։

Ինչ վերաբերում է Աւստրիային, այդ օրինակն էլ ոչինչ չէ ապացուցանում։ Բաւական է ամենահարևանցի ակնարկ ձգել այդ երկրի վրա, համոզվելու համար, որ այդտեղ պետական կեանքի անկանոն հոսանքը առաջացել է ոչ թէ աւտօնօմիայի չափազանց, այլ ոչ-բաւարար զարգացումից և մի և նոյն ժամանակ ներկայացուցչութեան դասակարգային հրէշաւոր կազմակերպութիւնից. *) Եւ, իրօք աւստրիական նահանգների շրջանային սէյմերը ցոյց չեն տալիս սեպարատիստ որևէ ձգտում, չեն անցնում իրանց լիազօրութիւնների սահմաններից և կենտրօնական ներկայացուցչութեան հետ կռւի չեն բռնվում։ Մի քանի նահանգներում, օրինակ, Բօհեմեան և Տիրօլեան սէյմերում, նկատվում է ազգութիւնների կռիւ, բայց այդ կռիւը ստանում է կատաղի և պետական կեանքի համար վնասակար բնաւորութիւն ոչ թէ շրջանային սէյմերում, այլ կենտրօնական պարլամենտում։ 1894 թւին Վինդիշգրեցի մինիստրութիւնը ընկաւ Շտիրիայում սլօվեան պրօգիմնազիա հիմնելու հարցի առիթով, բայց եթէ այդ հարցը, իբրև տեղական հարց, քննվէր տեղական պարլամենտում, անկասկած, ընդհանուր պետական մինիստրութիւնը չէր ընկնի նրա պատճառով։ Միւս կողմից էլ, եթէ շրջանային աւտօնիան ոչնչանար Աւստրիայում, ազգայնական կռիւները պետական պարլամենտում ոչ միայն չէին դադարի, այլ և շատ սուր կերպարանք կը ստանային։

Մի ուրիշ օրինակ էլ կարող է լուսաբանել շրջանային աւտօնօմիայի նշանակութիւնը պետական միութեան տեսակէտից։ Դա—Էլզաս-Լօտարինգիայի օրինակն է։ Երբ 1871 թւին գերմանացիները զէնքով նուաճված այդ երկիրը միացրեց գերմանական կայսրութեան հետ, նրա ժողովուրդը չէր թաքցնում իր սեպարատիզմը և թշնամական զգացմունքները դէպի Գերմանիան։ Եւ սակայն նուաճումից 6 տարի յետոյ, 1877 թւին, Էլզաս-Լօտարինգիային տրվեց շրջանային աւտօնօմիա, սահմանվեց տեղական սահմանադրական ժողով և մի տեսակ մինիստրութիւն Փոխարքայի մօտ։ Եթէ դատելու լինենք ռուսաց հայրենասէր-կենտրօնականների տեսակէտով, այդ քայլը պէտք է կործանաբեր լինէր Գերմանիայի միութեան համար, բայց գերմանացիները այլ կերպ մտածեցին և պատմութիւնը նրանց իրաւունք տուեց։ Այսօր Էլզաս-Լօտարինգիայի ազգաբնակութեան մեծամասնութիւնը սերտ կերպով յարած Գերմանիային. Փոխարքայի արտակարգ լիազօրութիւնները վերացված են և այժմ խօսվում է, որ այդ շրջանի իրաւունքները աւելի ևս լայնացնեն, ի հարկէ, այն նպատակով, որ աւելի ևս ամրապնդեն նրա միութիւնը կայսրութեան հետ։

Եթէ Ռուսաստանն ևս այդ քաղաքականութեան հետևէր և Լեհաստանին կամ Կովկասին նոյնպիսի աւտօնօմիա տար, միթէ այդ երկրները այժմ ներկայ աննախանձելի և ցաւալի վիճակի մէջ կը լինէին։

Ուրեմն աւտօնօմիան երբէք չէ կարող լինել պետութեան անդամահատութեան, նուազման կամ թուլացման պատճառ, այլ ընդհակառակը, նա կը լինի պայման պետութեան բարգաւաճման և հզօրութեան, և աւտօնօմ երկիրների կապը աւելի սերտ կը լինի, քանի որ նրանք կը վայելեն պետութեան ընդհանուր հովանաւորութիւնը և աջակցութիւնը։

Ընդհակառակը, աւտօնօմիան ոչ միայն վնասակար չէ, այլ նա անհրաժեշտ է պետութեան բարգաւաճման համար, և ահա ինչ պատճառով։ Եթէ աւտօնօմիայի վրա նայենք առողջ և գործնական տեսակէտից, մենք կը տեսնենք, որ իսկապէս նրա էութիւնը այս է. **հարկա՞ւոր են արդեօք Ռուսաստանում, թէ ոչ, տեղական օրէնքներ**։ Եթէ գտնենք որ **տեղական օրէնքներ** պէտք չեն, որ Ռուսաստանը կարելի է կառավարել միայն **ընդհանուր օրէնքների** միջոցով, որոնք կը գործեն լայնածաւալ կայսրութեան ամբողջ տարածութեան վրա, այն ժամանակ, ի հարկէ, աւտօնօմիա պէտք չէ։ Բայց դա աններելին է. անկարելի է երևակայել, որ 130 միլիոն ժողովուրդ ունեցող մի ահագին պետութիւն, որի առանձին մասերը խառն տարբերվում են իրարից կենցաղական և կուլտուրական պայմաններով, պետական և սահմանադրական կեանքը կարողանայ ընթանալ կանոնաւորապէս և խաղաղ, երբ օրէնսդրական ամբողջ գործունէութիւնը կենտրօնացած լինի Պետերբուրգում նստող մի քանի հարիւր ընտրեալ մարդկանց ձեռքին։ Եւ եթէ դեռ պարլամենտը չէ կարող կառավարել Պետերբուրգից ամբողջ կայսրութիւնը, էլ առաւել այդ աններելին է, երբ բիւրօկրատիան է կառավարում, ինչպէս մինչև այժմ։

Այդ հարցն աւելի մանրամասն կը բացատրենք մեր յաջորդ յօդուածի մէջ.

Հ. Առաքելեան

ՓՈՔՐ ԻՆՉ ՍՏԱՏԻՍՏԻԿԱ

Ի պատասխան Պետական Դումայի ներկայացրած ագրարային ծրագրի, որը պահանջում է որոշ վարձատրութեամբ յետ գնել պետական, ուդելնի և այլն հողերը և նրանց գիւղացիներին տալ օգտվելու համար, Գօրեմկինի մինիստրութիւնը ասաց՝ որ այդ յետ գնելու ձևը միանգամայն խախտում է սեփականութեան սկզբունքը, ուստի և դա թոյլատրելի չէ կարող լինել։ Դրա փոխարէն մինիստրը առաջարկեց հաստատ հիմքերի վրա դրնել և լաւ կազմակերպել գաղթականութեան գործը, Եւրոպական Ռուսաստանի հողազուրկ կամ սակաւահող գիւղացիներին ուղարկել Սիբիր, ուր շատ ընդարձակ և ազատ հողեր կան։ Մինիստրի ասելով դուրս է գալիս, որ Եւրոպական Ռուսաստանը այնչափ խիտ բնակչութիւն՝ ունի, որ ժողովրդին սովից փրկելու համար, մնում է միայն նրան գաղթեցնելու ծայրահեղ միջոցին դիմել։

Նայենք այժմ, թէ ինչ է ասում մեզ իրականութիւնը։

Ամբողջ Եւրոպական Ռուսաստանի 49 նահանգներում մօտաւորապէս 130 միլիոն դեսեատին հող կայ, որ գիւղացիներին է պատկանում։ Իսկ գիւղացիների թիւը այդ նոյն նահանգներում մօտ 50 միլիոն է։ Կը նշանակէ միջին թւով իւրաքանչիւր գիւղացուն ընկնում է 2, 6 դեսեատին հող։ Իսկ ամբողջ կայսերական ընտանիքի անդամները, որոնց թիւը գուցէ ոչ աւելի քան 60 հոգու է հասնում, ունեն մօտ 60 միլիոն դեսեատին հող. իւրաքանչիւր անդամը մէկ միլիոն դեսեատին հող։ Եւ որովհետև այդ բոլոր 60 միլիոն դեսեատին հողերը մշակութեան են տրվում և կառավարվում են Գօրեմկին—Դուրնօվօների եղբայր մեծ ու փոքր բիւրօկրատների ձեռքով, ուստի չափազանց հասկանալի է, թէ ինչու բիւրօկրատիան այնչափ հակառակ է Պետական Դումայի առաջարկած ծրագրին և թէ ինչու է նա այնպէս «անհատական սեփականութեան անձեռնմխելիութեան» մասին ճառում։

Բացի դրանից՝ Եւրոպական Ռուսաստանի և Սիբիրի հողերի քանակը հասնում է մօտ 1590 միլիոն դեսեատինի։ Դրանից մասնաւոր սեփականութիւն են կազմում ընդամենը 225 միլիոն դեսեատին։ 60 միլիոն դեսեատինն էլ, ինչպէս ասացինք, Կայսերական ընտանիքին են պատկանում, իսկ մնացեալ աւելի քան 1300 միլիոն դեսեատինը, որ **արքունական** (казенный) անունն են կրում, ամբողջապէս բիւրօկրատիայի տրամադրութեան ներքոյ են գտնվում։ Ոչ ոքի հաշիւ չը տվող, ոչ ոքի առաջ պատասխանատուութեան չենթարկվող բիւրօկրատիան, առանց ըստ մեծի մասին հողային սեփականատէր լինելու, երկրի ամենալաւ և ամենաընդարձակ հողերի եկամուտներն է վայելում ու իր անյատակ փորը լցնում։ Եւ ի հարկէ, ոչ մի զարմանալու բան էլ չը կայ, որ նա այսօր կատաղում փրփրում է Դումայի առաջարկած ագրարային ծրագրի դէմ, ինչպէս և կատաղում, փրփրում է, երբ մինիստրական պատասխանատուութեան մասին է խօսք լինում։

Բայց, բերենք էլի մի քանի պերճախօս թւանշաններ։ 1893 թ. մինիստրութեան ներկայացրած հաշւից երևում է, որ բոլոր պետական, այսինքն՝ 1300 միլիոն դեսեատին հողերից արդիւնք է ստացվել ընդամենը $84^1/_3$ միլիոն րուբլի։ Կը նշանակէ իւրաքանչիւր դեսեատինից ստացվել է ընդամենը $6^1/_2$ կօպէկ։ Թէ որչափ է բիւրօկրատիան այդտեղ կուլ տուել, այդ ակնյայտնի է, բայց չը բաւականանալով իր անպաշտօն կուլ տուածից, նա այդ գումարից մի քանի միլիոն էլ պաշտօնապէս վերցրեց «ադմինիստրացիայի պահպանութեան» համար,

Մեր բիւրօկրատիայի ափաշքարա առաջարկութիւնը աւելի բէլէեֆ դարձնելու համար, ավժէ այստեղ բերել նոյն 1893 թ. Ֆրանսիայի մինիստրութեան ներկայացրած հաշւից, իրանց պետական հողերից ստացված եկամուտի մասին։ Ֆրանսիան ընդամենը մէկ միլիոն դեսիատին պետական հողեր ունի, որից վերոյիշեալ թւականին ստացվել էր $11^1/_2$ միլիոն րուբլի եկամուտ, այսինքն իւրաքանչիւր դեսիատինից $11^1/_2$ րուբլի։ Կը նշանակէ Ֆրանսիան իր պետական հողերի իւրաքանչիւր դեսիատինից եկամուտ ստանում է մօտ 180 անգամ աւելի, քան Ռուսաստանը։ Այլ խօսքերով՝ այդ աւելին ամբողջապէս մեր բիւրօկրատիայի կոկորդն է մտնում։ Այս բոլորից յետոյ, ապա ինչպէս չը գրգռվի մեր բիւրօկրատիայի ախորժակը, ինչպէս նա իր յօժար կամքով ձեռքից բաց թողնի ստամոքսին այնչափ հաճելի իւղոտ պատառները...

Ռ.

ՍԵՒ ՊԱՐԱՆԻ ՀԱՆԳՈՅՑՆԵՐԸ՝ ԲԱՑԷՔ...

(Քահանաների կրկնամուսնութեան նկատմամբ)

Դժգոհութեան և տառապանքի ձայներ են լսվում մեր աշխարհիկ հոգևորականներից։ Մի ինչ որ իրարանցումն է սկսել... Թւում է թէ՝ ռուս-ճապօնական ահեղ պատերազմը՝ բնութեան գրկից մի ժայռ պոկելով, հարուածեց նաև մեր Հոգևոր—Անդաստանի շրջապարիսպը, որից արթնանալով մեր «բարեկրօնների» բազմութիւնը, սկսել է տնտղել կեանքը։ Տակաւին ընդհանուր խնդիր չը կայ։ Իւրաքանչիւր ցաւագար իր ցաւն է լալիս. օրինակ՝ քահանաներից ոմանք՝ թատրոն յաճախելու տենչումն են բռնվել, թատրոն են ուզում. և ոմանց ասելով, այնտեղ թատրոնում աւելի լաւ ըմբռնելու են կեանքի ճշմարտութիւնը։

Իսկ ոմանց էլ երեցուհիներն են մահացել, անմխիթար թողնելով դեռահաս զաւակներին՝ և քահանային։ Պարբերական թերթերում առ այժմ ժողովրդի մաս-մաս բաժինններն են արձագանք տալիս քահանաների խնդրին։ Հոգևոր կուսակրօն իշխանութիւնը լուռ հանդիսատես է և կարծէք թէ այս հարցն էլ է ուզում քահանայական «ցենզի» կողքին թաղել։ Գուցէ այս այդպէս էլ լինի, եթէ հայ-ժողովուրդը վերստին շարունակէ իր ընդհանուր լռութիւնը։ Բայց պէտք է իւրաքանչիւր ոք՝ գիւղացի թէ քաղաքացի ամենայն աչալրջութեամբ ի նկատի ունենայ, որ քահանաների կրկնամուսնութեան խնդիրը՝ այսօր նմանվում է «տաշտի թթված այն խմորին», որը ինքն-իրան հասունանալով ու եփվելով, արդէն տաշտից թափվում է գետին և խմորը՝ որ քահանայի նուիրական անուան ստուերականն է, հաւասարվում է «աղբ ու ժխերին»... Ուրեմն՝ պէտք է գումարվել, կենդրօնանալ՝ այս հրատապ խնդիրը կարգաւորելու և բարւոքելու համար։

Մեր եկեղեցու նախնի հայրերը, պսակադրութեան կենսական խորհուրդը իսպառ սահմանափակելով հայրապետների, կաթողիկոսների, վարդապետների, սարկաւագների նկատմամբ, սահմանափակել են նաև քահանաների համար՝ վերջիններիս կոչումն ստանալուց յետոյ։ Այս յայտնի զրկանքի փոխարէն, եկեղեցին՝ հոգևորականներին, քահանայական աստիճան ունեցողներին պարգևել է համարեա «ինքնակալութեան» մի փառաւոր իշխանութիւն. այն է՝ «կապելու և արձակելու» իրաւունքը։ Կէս-աստուածեան այդ շինծու մեծութիւնը այսօր կուլ է եկել բնական օրէնքի հանդէպ։ Վեղարներ են, որ այժմ պօստով են յետ դրկվում... ուրարներ են, որ դէն են շպրտվում։ Սուրբ ճանապարհը կարճ է, ասում ժողովուրդը։ Ուրեմն այս դէպքում ինչ է մընում քահանաներիս, երբ բողոքականները կրկնամուսնութեան ոչ սահմանափակ խնդիր են յարուցանում։ Ըստ իս՝ «կապելու և արձակելու» իրաւասութիւնը ջուրը պէտք է գնել և ուրիշ կերպ էլ չի կարող լինել։ Յետոյ՝ մենք ընդունում ենք, որ սէրը՝ անսահման է, անվերջ է և աներկիւղ. սէրը՝ կեանքի միակ միջոցն է, ապա ուրեմն, ինչ իրաւունքով այդ անսահման կենսատու զօրութիւնը՝ մենք սահմանափակել ենք, ու անուն կնքելով, համարել ենք «խորհուրդ պսակի» և ապագայ բարւոքման և կարգաւորութեան լիազօր ան- չութիւնը կենդրօնացրել ենք կեանքից խոր- տուող միայնակեացների ձեռքում, որոնք ծելով եկեղեցու չորս պատերի ներքոյ. միթէ սա խելքի և մտքի տհասութեան արդիւնք չէ...

Խոստաճարակների ցամաք հոգին, մութ դասակարգը՝ սիրոյ զուգաւորութեան կապը ոլորելով տուել են զանազան հանգոյցներ, պարանի պոչիցն էլ պինդ բռնել են. երբ ուզում են արձակում են հանգոյցները, իսկ կամեցած դէպքում էլ «պնդապինդս» կապելով, դեռ նզովքի օղակ էլ են հագցնում վրան և դարձնելով մի սև պարան, տանջել և տանջում են մեր անգէտ ժողովրդին... Սակայն իրաւունքների յարգելու այս դարաշրջանում, պէտք է իսպառ վերացնել սիրոյ այս կամ այն սահմանափակումը։ Պսակի խորհուրդը միանգամայն պէտք է հանել եկեղեցու կարգաւորութիւնից։ Այնուհետև թէ քահանաների «ողբն ու կոծը» կը վերջանայ և թէ անպէտ գիւղացիք «հալ ու մաշ» չեն լինի սև հոգևորականների դռները մաշելով։ Արդարև, մի ժողովրդին հարկաւոր են իր հետ ապրող ու կեր ուսուցիչ երէցներ, բայց ոչ Հռոմի պապական աստուածպետական իշխանութեան հետե- խրտուիլակներ, որոնք դաւ ի սիրտ, եկեղեցիների տեսչութեան ղեկը իրանց ձեռ առնելով, մոռացել են այն ժողովրդին, սեղանի փշրանքներից են ապրել և ապրում...

Ծխական իրաւասու համայնքը՝ որ լիազօրութիւն մէկին քահանայ ընտրելու, նելով վերջինի կենսական հարցի բոլոր ծա- րութիւնը իր վրա, երկրորդին տալիս է լիազօրութիւն իր եկեղեցու գոյքը կառավարելու, երրորդին դպրոցի տեսչութիւնը, լիազօր նաև պսակադրութեան հարցի իրաւունքը իր տասու կողմերով իր ընտրեալների իրաւասու թեան վերապահել։ Ծխական ժողովը՝ իբր կենդանի եկեղեցի, կարող է ունենալ երկ ընտրեալներ, որոնք պսակադրութ ան ժամ քահանայի հետ միասին վկայի պաշտօն կատարեն։ Եւ ի դէպ, եթէ ժամանակին պսակ վողներից կամ կինը և կամ մարդը այս կա այն պատճառով այլ ևս անկարող են շար նակել իրանց զուգակցական կեանքը, այդ պարզվի ծխական ժողովում և ծխական ժ ղովի վճռով էլ բաւարարութիւն կը գտնե Ցաւալի է, որ գիւղացիք այս նպատակի խնդիր կը յարուցանեն հոգևոր-ծայրագոյն իշխանութեան առաջ։ Հայ ինտելիգենցիան մամուլը ձեռներէց պիտի լինեն մեր գիւղացիներին տալու ծխական կանոնադրութիւ Կարծիք չը կայ, որ սրանից յետոյ, ծխական տուրքերը, որը մեր խեղճ գիւղացի համարեա թէ իր երեխայի բերանից կտրել ուղարկել է «Մայր-Աթոռ» և կամ թեմական առաջնորդներին, այդ գումարներով նա իր շինական դպրոցի հոգսը կը հոգայ։ Դժբախ բաւականութիւնը պարզեց, որ հայ վարդապե յաջորդներից շատերը և առաջնորդներից մ ծառայութիւնը՝ ժողովրդի կրթական գործ ծով չեն հետաքրքրվում. ուրեմն, մնում է հայ ժողովրդին ի մի խմբվելու, կենդրօնանալու կանոնաւոր ժողովներով քանդելու այս կա այն սև պարանի հանգոյցները։ Բաւական է որքան տանջվեց անմեղ հայ ժողովուրդը « շերիմների» կամ «բռնալ գերեզմանների» գի մացը խունկ ծխելով...

Ներսէս քահանայ Հերթեցեան

Ս. Խաչ վանք

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մայիսի 15-ին

Ամսիս 12-ին, վաղարշապատցիներից տերի, գլխաւորապէս չքաւոր դասակարգի համար մի պատմական օր էր։ Այդ օրը իրականանում էր ժողովրդի փայփայած իղձը։ Նա բաթ օրը, ըստ վաղեմի սովորութեան, մունետիկ—Բըրուզը, կոկորդը գինով օծած, բարձր ձայնով յայտարարում էր հասարակութեան՝ «Վաղը բաշխվում է չունևոր խնդրատուներին այգետեղի և տնատեղի»։

Վաղարշապատը տարիների ընթացքում ճել է տեղացիներով և եկւորներով, բայց ա գիները և տները մնացել են մի և նոյնը, բացառութեամբ, որ տարիների ընթացքում ս. Սինօդը ընծայել է յատուկ իր «ընտրեալ ներին»։

Նշանակված ժամին խնդրատուները արդէ ժողովվել էին ս. Գայիանէ վանքի բակը, գալով Սինօդի անդամներից երկուսը յայտ նեցին խնդրատուներին, որ բաշխվում է չու նևորներին առ այժմ միայն այգետեղի հնձան նախոս անուանեալ հողից և միանգամայն բո լոր խօսակցութիւններին վերջ տալու համար վիճակ ձգվեց տեղերը։ Ստացողները լիաառատ օրհնելով, ուրախ տրամադրութեան տակ շտապեցին տանը այդ ուրախութեանը մասնակ անելու իրանց ընտանիքներին։

Տնատեղի բաշխումը յետաձգվեց մի քանի ժամանակով։

Այգիները առատ են խաղողով։ Խնձորի ները ամբողջ ծածկված են սպիտակ թաթիւով։ Ցորենները լաւ հունձ են խոստա նում։ Անձրևներ չեն գալիս։

Գ. Աղաջանեանց

ՄԻ ՕՖԻՑԵՐԻ ՆԱՄԱԿԸ

Մանջուրական զօրքի պօրուչիկ րիստ К. «Дѣло Народа» լրագրի մէջ մի կոչ է ուղղել ընկեր-օֆիցերներին, որը առաջ ենք բերում.

Դուք կարդացել էք, որ շատ հին ժամանակներում կար ասպետների դաս։ Նա սպառազինվում էր, զարդարում էր իր դէմքը ոսկով ու պաճուճանքներով, ամուր բռնում էր վահանն ու զէնքը... և այդ ամուր, կոպիտ, ֆանտաստիկ, բայց և գեղեցիկ սպառազինութեան տակ մի մարդ բաբախում էր մի վեհազն ու ազնիւ սիրտ,—գոնէ այդպէս են վկայում այն գրքերը, որը դուք կարդացել էք։ Ասպետը հպարտութեամբ էր նայում իր ընկած զոհին, բայց խղճից դադրեցնում էր հարուածը, երբ տեսնում էր թշնամուն ընկած։ Գերին նստած էր բանտում, բայց ասպետը սեղմում էր նրա ձեռքը՝ Երբ ազնւական թշնամին գերի էր ընկնում և անցնում մօտիկից, ասպետը անպատուաբեր էր համարում իր համար հարուածել նրա թիկունքից։ Անցան ժամանակները և վերջացաւ ասպետութիւնը։ Բայց մինչև վերջին ժամանակներս օֆիցերական միջավայրը հաւատացած էր, որ ասպետական վարմունքը դէպի մարդիկ ամենից աւելի պահպանվում է, դաստիարակվում ու գերակշռում զօրքի մէջ։ Չէնց նշանագգեստի պատւի հասկացողութիւնն էր, որ վճռում ու թելադրում էր գործածել անցեալի աւանդը. մենամարտութիւնը։

---

*) Տես Кокошкинъ, Областное автономія единство Россіи.

Ու՞ր ոք չը պէտք է պատուաւոր նշանագգեստի պատիւը...

Նշանակում է նշանագգեստը պարտաւորեցնում է հագնողին միշտ լինել սրտի և խղճի ասպետ։

Բայց ի՞նչ ենք մենք տեսնում այժմ։ Մի՞թէ ասպետութիւն է, օֆիցէրի համար դահճի դառնալ և կատարել այն դերը, որը քրէական յանցաւորներից ոչ ամենքը փողով անգամ յանձն կառնեն։

Ասպետութի՞ւն է, արդեօք, խաբել բռնված մարդկանց, սիրալիր կերպով առաջարկել նրանց առաջ գնալ, իսկ թիկունքից գնդակահար անել։

Ասպետութի՞ւն է, արդեօք, կոտորել գերիներին, ցուցակներով գնդակահարել, հանգչել ծխախոտը մերկ մարմնին կպցնելով, և առհասարակ ծաղրել կամ թէկուզ հեգնանքով վերաբերվել դէպի զոհերը։

Ես կը հարցնեմ, վերջապէս, ասպետութիւն էր արդեօք այն մարդկանց կողմից, որոնք լէյտենանտ Շմիդտի դատաւորը դարձան այն մարդկի, որոնք կատաղի կռուի բոպէին անմիջական թշնամիներ էին իրանց հաւասար հակառակորդի համար։

Այն հարիւրաւոր փաստերը, որոնք մղձաւանջի նման շարան-շարան հիւսված են մեր լրագրական էջերում, միթէ, վերջապէս չեն արտայայտում օֆիցերական նշանագգեստի պատիւը, և ժամանակ չէ՞, արդեօք, որ ամբողջ օֆիցերութիւնը, իբրև մի մարդ, ոտքի կանգնէ պաշտպանելու այդ պատիւը և բարոյական մենամարտի հրաւիրէ նրան, ով համարձակութիւն ունեցաւ ոտնատակ տալ նրան իր կեղտոտ ոտներով։

Ընկեր-օֆիցերներ!

Դահիճների ձեռքով տանջված, յօշոտված, անարգանքի մատնված ու սպանված մարդկանց արիւնը դուրս ցայտեց ճեղքված վէրքերից սարսափելի ոյժով և, խառնվելով կեղտերի հետ, կեղտոտեց ամբողջ ռուսաց զօրքի բոլոր նշանագգեստները։ Հարկաւոր է լուանալ այդ կեղտը, արիւնի այդ կաթիլները մեր նշանագգեստների վրայից, մաքրել ինչ որ էլ լինի, թէկուզ հէնց խայտառակութեան սիւնի վրա մեխելով բոլորին, ով պղծել է նրան...

Ընկերներ! Մանջուրիայի կռուի դաշտում մենք չէինք վախենում մահից, և վայել էլ չէ զօրականի համար վախենալ նրանից։ Լինենք քաջասիրտ, ասպետաբար հպարտ, վեհոգի, անվախ և հասկանալի, վերջապէս, որ, հաւատարմութեան ուխտ տալով, մենք այնուամենայնիւ չենք երդվել կատարելու կառավարութեան քմահաճոյքները և զօրականի պատուաւոր նշանագգեստը ցեխոտելու։

Մինիստրներ և ուրիշ խորհրդականներ։ Մի խաղաք կրակի հետ։ Մեծ զգուշութեամբ վերաբերվեցէք երկրի հասարակական կարծիքին առհասարակ և օֆիցերութեան մանաւորապէս...

Ընկերներ-օֆիցէրներ! Պահանջեցէք անյապաղ դատ նշանակել նշանագգեստի պատւի համար. պահանջեցէք անյապաղ հրապարակային դատաստան և լիակատար քննութիւն օֆիցէրութեան և հասարակութեան հսկողութեամբ։

Դատաստան և քննութիւն թէկուզ միայն հէնց ձեր յիշած հասարակական գործի համար—և եթէ չէ հաստատվի բոլորը, ինչ որ մենք լսել ենք և գիտենք, այն ժամանակ միա բոլոր մեղադրանքներն էլ ինքն իրանց կոչնչանան։ Կամ թէ... կը բացվի այն անդունդը, դէպի որը անդառնալի կերպով սահում է և ռուսաց զօրքի զինուորական պատիւը և նրա զօրութիւնը։

«Страна»

ՄԱՔՐԵՑԷՔ ԱՍՊԱՐԷԶԸ

IV

Վանական կալուածները յափշտակվեցին, վանքերի դրութիւնը վատթարացաւ։ Շատ վանքեր զրկվեցին վանահայրերից, շատ վանահայրեր օգնական միաբաններից, շատ միաբաններ պահապաններից, վերակացուներից, ծառաներից և ընդհանրապէս մատնվեցան ամայութեան ու աւերածութեան...

Եկամուտ չէին ստանում վանքերը։—Նրանց հոգեւոր կառավարութիւնը ժողովրդի տուած կոպէկներով էր ապրում։

Անունով չունէին վանահայրերը։ — Նրանք փախչում էին դէպի քաղաք, դէպի Էջմիածին։ Նախկին ճոխ վանական կեանքը դատապարտվեց խղճուկ կառավարութեան. վանահայրը ձեռքը պէտք է մեկնէր և ողորմութիւն ուզէր...

Մի յոյս էր մնացել միայն։—Որ կառավարութիւնը յետ դարձնի կալուածները և վանքը իր նախկին կեանքը ստանայ։

Պսակվեց մեր յոյսը—ցանկութեան առաջին կէսը. իսկ վերջինը չիրականացաւ. վանական կեանքը մնաց նոյնը. նա չը զգաց անգամ մի փոքր փոփոխութիւն իր մարմնի վրա, թէ վանքի եկամուտն այժմ վանքումն է մնում...։

Քիչ օրեր չեն անցել—Չորս ամիս, կամ 120 օր, որ Ղարաբաղում կառավարութեան ագէնտները տուին մեր ձեռքը մեր վանքերի կալուածների բանալիները և նրանց եկամուտների մատեանները և ասացին՝ «ձերն է այսուհետև, կառավարեցէք, ստացէք և գործածեցէք»։

Յետ առացան և միայն յետ։—Բանալիները մնացին պուճախներում ժանգոտվելիս, իսկ մատեանները պահարաններում մնեխի հետ։ Ինչո՞ւ։

Զարմանք «ինչու»։—Մի՞թէ հարկաւոր է մարդ ասողի տակ տառապող երկրին այս հարցը տալ։

Ստանված են մարդիկ։ Վսեմ գործեր կան կատարելու։—Ո՞վ է մտածում հասարակ մանրանքների մասին։

Ինչացու է Խօթայ վանքի 48 հազար դեսեատին անտառը իր արօտամարգերով։

Ինչացու է Գանձասարի 10 հազար դեսեատին «ոսկի» կոչված ծմակը, Ջրաղացքարի հանքը, պղնձահանքը, փարուչանքը, խոտահարքը։

Ինչացու է Յակոբայ վանքի «երիտասարդ» անտառը։

Ինչացու է Ամարասի արգասանդ վարելահողը, այգին ու այգետանը։

Ոչինչ, ոչինչ այս ամենը փառասիրութեան անկիւնով մոլված և քաղաքի փափկասէր կեանքին ընտելացած հոգևորականի համար, որի ուսերին եկեղեցու ուխտը շալակ է տուել մի նուիրական բեռ—ծառայելու այն եկեղեցու, վանքի շահերին, որի զաւակները կերակրում են նրան և որի եկամուտները պէտք է ծառայէին շատ և շատ պէտքերի...։

«Ո՞վ է մտածում հիմա վանքերի մասին. անցան նրանց դարը, ժամանակները...։

Ահա այս պատասխանն է տալիս ձեզ վանական հոգեւորական առաջնորդը, երբ դուք դիմում էք նրան և խնդրում աւերված Գանձասարն ու Ամարասը շէնացնել, գոնէ մի մի վարդապետ, մի մի վերակացու, կամ... մի մի տիրացու դնել երբեմն կաթողիկոսարան եղած այդ մենաստաններում։

Եւ դուք հեռանում էք հիասթափված։

Բայց միթէ միայն վանքերի համար են ձեզ ճանապարհում հիասթափեցնող պատասխաններով։ Ո՛չ։ Նոյն և աւելի տխուր վերաբերմունք, քարացած անտարբերութիւն դուք տեսնում էք և այն կալուածների նկատմամբ, որոնք բուռն բողոքներով ու մարտերով յետ դարձրվեցան դրաւման ճանապարհից։—Անտէր են նրանք, անխնամ, անվերակացու։ Անտառը կտրում է՞ ով համում է, հողը վարում է՞ ով կարողանում է. մարգեր ու արօտներ են արածացնում, ջրաղացքարի հանքեր են շահագործում, այգիներ են մշակում—ամենքն իրանց համար. ո՞վ է խօսացնողը, ո՞վ հարցնողը։ Գուցէ իմացող էլ չը կայ, թէ Ղարաբաղի վանքերը կալուածներ ունեն, կալուածները 8—10 հազար ռուբլու հասցնող արդիւնք. ինչո՞ւ մեղադրենք։

Ո՛չ, մի բան կայ։ Կարծես իմանում են, որ կայ, ժողովրդի աչքից հեռու, իսկ սրտից մօտիկ, որը դարձեալ ուզում են հեռացնել, վհատեցնել, բանի տեղ չը դնել, ասելով «ո՞վ է դրանց մասին մտածում, բան չունե՞ք»։ Այդպէս են սառցնում ժողովրդի սրտերը։—Հրապարակի վրա չեն դնում այդ հարցը, կալուածական կառավարութեան կարևոր հարցը, և ուզում են տնտեսի կերպով հասարակ մի մարդու յանձնել կալուածների կառավարութիւնը։ Մի մարդու, որը դարձեալ իրանցից է, մի վարդապետի բարեկամ, նրա շինական մի կօնդակատար։ Նրան նա էլ է զգացել, որ վարդապետները գործին մանուկների արանքով են նայում և աւելի պատուաւոր է գտնվել մերժել հրաւէրը։—Դա ինձ պատմեց այն պարոնը, որի միջոցով եղել է մերժումը...։

Եւ ո՞վ դարձն է կարծել գլուխն այդ անտակ «պստիկ» գործի տակ կոխելու, երբ կօնդակատար Լևոնն էլ լայեղ չէ անում նրան։

Կալուածների կառավարութիւն... Շատ է մանրացել ու նսեմացել այս անունը արդի Ղարաբաղի «իշխանութեան» առաջ։

Դա ժողովրդի աչքից հեռու մի բան է. ինչ գործ ունին դրա հետ։ Աւելի այրող, թարմ, հերթական հարցեր կան հրապարակի վրա, որոնց մէկն է ժողովրդից շատ մօտիկ, շօշափելի, աչքի ընկնող «Աղքատանոց» բանալու հարցը։ Շատ մօտիկ, այնքան՝ որ բուռն մէջ պահվող փոշին ամենամեծ կերպով փչելով շպարներ կը կպչէ մարդկանց աչքին...։

Գործ է հարկաւոր, ահա այսպիսի գործ—կենդանի, փայլուն, շարժուն... Ի՞նչ կայ կալուածների մէջ։ Առասպելներ էին, որ պատմվում էին նրանց մասին հին հին դարերում, թէ նրանց եկամուտը թեմական դպրոց և ճեմարան կը պահէր։ Անցան այդ դարերը, այդ առասպելները...։

Ձէ՞ք հաւատում։ Դա մի համոզմունք է, խորագոյն համոզմունք, երկու գոյնով ոսկեզօծված. մէկ՝ որ նսեմացվէն ժողովրդի աչքում վանքն ու նրա կալուածների արժէքը, ցոյց տալու համար աւելի ապառաժի, արմատական հայեացք, ռեալ գործողութիւն, և միւս՝ որ գործողութեան ոյժը պատկերանայ էրերի շուրջը, ժողովրդի աչքին երևալու համար, թէև յաճախ սխալների, հակասութիւնների ենթակայ։

Նա «պստիկ» բաների հետ գործ չունի...։

Ի՞նչ բան է կալուածների կառավարութիւնը, «Մեծ Սարիբէկը» մինչև անգամ Շուշուքէի տակից դուրս պրծաւ։ Նա 150 ր. եկամուտ էր տալիս։ Բահնային սպանեցին, ուխտատեղին թէ նրա ձեռքից ազատվեց և թէ կօնսիստորիայի։ Բայց սա աչքից մօտ գործ է, ինչո՞ւ է աչքամող արել «իշխանութիւնը»։ Թող նա երախտապարտ լինի մեզ, որ յիշեցնում ենք այդ մոռացված, տան դրան փռվող 150 ր. եկամուտի աղբիւրը։ Գոնէ մի մարդու տան, ստանան և ուտեն, քան թէ ժողովրդի շնքին կրկնահարկեր կաւելացնեն...։ Ներողութիւն, ես սխալվեցի և զուր յիշեցի «պստիկ» կալուածների առաջ «Մեծ Սարիբէկի» անունը և նրա եկամուտը ժողովրդի կրկնահարկերի հետ կապելը։ Թող աւերված, քայքայված ու քրքրված գիւղացին պսակի համար 10 ր. տայ, իսկ կալուածների 10 հազար ռուբլիները կորչին, անհետ կորչին։ Թող ժողովրդի կոպէկներով առաջնորդները 3 հազարներ ստանան, ինչ ենք անում վանքերի եկամուտները։ Նրանք հեռու են, հաւաքելը դժուար է, կառավարելը տանջանք։ Աւելի դիւրին չէ կաբինետի մէջ նստել և եկողին խիղճել ու 10 ռուբլիներ առնել...։

Տ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Մերվ, 11 մայիսի։

Ամսիս 9-ին և 10-ին Մէրվի հասարակական ժողովարանում, Ասխաբադի Թուրք Թատերասէրների խումբը առաջին անգամ ներկայացրեց Թուրքերէն լեզւով Վէզիրովի «Изъ дождя давъ ливенъ», և Էֆէնդիեվի «Гнѣздо Кровопійцевъ» կօմէդիան։ Ամբողջ օգուտը յատկացրված էր Ասխաբադում բացվելիք ռուս-Թուրքական ուսումնարանին։ Երկու ներկայացման էլ բաւական հասարակութիւն էր հաւաքվել, չը նայած որ տոմսակների գները թանգացրել էին։ Հանդիսականների կէս մասը հայեր էին։ Դերակատարները մեծ մասամբ ուսանողներ էին, որոնք աչքոյ կատարեցին իրանց դերերը և հանդիսականներին բաւական ուրախացրին ու ծիծաղացրին։ Դերակատարներից մէկը ներկայացման վերջը բեմից Թուրք ժողովուրդին մի ճառ խօսեց թատրոնի նշանակութեան մասին. վերջն էլ աւելացրեց, որ Թուրքերը և միւս ազգերը (այսինքն հայերը, ուրիշ ազգ չը կար) կեանքի մէջ էլ սիրով և համերաշխ լինեն, այդ է պահանջում մեր շահը։ Բուռն ծափահարութեան արժանացաւ ճառախօսը։ Երկրորդ ներկայացման վերջն էլ բեմ բարձրացաւ տեղիս յայտնի փաստաբան Ալիևը և կրճատ խօսեց Թուրքերի կողմից. առանձնապէս շնորհակալութիւն յայտնեց ներկայ եղող հայերին, որ նրանք յարգելով Թուրքերին եկել են ներկայացմանը պատուելու լուսաւորութեան տարածման Թուրքերի մէջ. ցանկութիւն յայտնեց, որ երկու դրացիները միշտ սիրով լինեն և միշտ միմեանց օգնեն, այդ է պահանջում մեր շահը։ Երկար ծափահարութեան արժանացաւ։ Վերջն էլ Ալիևը խնդրեց սիրողներից, որ Ասխաբադ վերադառնալուց Ասխաբադի Թուրքերին յայտնեն Մերվի հայերի ցոյց տուած բարեացակամութիւնը դէպի Թուրքերը։ Այնուհետև հանդիսականները ուրախ տրամադրութեան տակ ցրվեցին տները։

Մինչև վերջերս չէր տեսնված, որ Թուրքերը իրանց Ջումայի (կիրակի) օրերը խանութները փակէին, իսկ այժմ ուրբաթ օրերը բոլոր Թուրքերը խանութները փակում են։

Գ. Հայրապետեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիրաւոր գեներալ-Ալիխանովի դրութեան մասին հաղորդում են հետևեալը։ Հիւանդի ընդհանուր դրութիւնը գոհացուցիչ է, թէև ռումբի կտորներ մնացել են փայծաղում և առ այժմ դուրս չեն հանված։ Այսօր նրա տաքութեան աստիճանը 37, 5 է, քունը անվրդով է։ Այսօր դատաստանական պալատի դատախազը և կարևոր գործերի դատաստանական քննիչը Իլեաշենկօ գնացել էին գեներալ Ալիխանովի բնակարանը քննութիւն կատարելու համար, բայց ընտանիքը յայտնեց, որ բժիշկները նրան արգելել են խօսել, ուստի քննիչը հարցաքննեց նրա եղբօրը փոխ-գնդապետ Կայշման Ալիխանովին, որը ականատես էր գեներալի մահափորձին։ Նա հաղորդել է, որ այն տունը, որտեղից ձգել են ռումբը, նախապէս անբնակ է եղել և կողպեքները հրդեհել են։ Հրդեհի ժամանակ պայթում էին ռումբեր։ Մայիսի 17-ին մտադիր էին հիւանդի վէրքը վիրակապել, ռումբի կտորները դուրս հանելու համար, բայց չեղաւ և առ այժմ յետաձգված է։

Թիֆլիսում այս օրերս կը բացվի Ջուլհակութեան արհեստանոց։ Այն անձերը, որոնք ցանկանում են սովորել այդ արհեստը, թող տեղեկացնեն այդ մասին արհեստանոցի ղեկավարներին։ Նրանք կարող են դիմել և «Մշակի» խմբագրութեան։ Արհեստանոցը նախ կը բացվի փոքր չափով, իսկ յետոյ, երբ գործը կը կազմակերպվի, այն ժամանակ կընդարձակվի։

Թիֆլիսի գաւառապետի աւագ օգնական Ա. Վ. Գերասիմովը նշանակված է Շուշու գաւառապետ։

Կիրակի, մայիսի 21-ին առաւօտեան ժամը 10-ին, նոր. Նիկիտինների ցիրկի շէնութեան մէջ նշանակված է սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ընդհանուր ժողով։ Անդամները ներս կը թողնվեն ծանօթաթղթերով։ Այն անձանց, որոնք կը ցանկանան մտնել այդ կուսակցութիւնը, տրվում են ծանօթաթղթեր կուսակցութեան ժողովին մասնակցելու համար։

Հինգշաբթի, մայիսի 18-ին, քաղաքային խորհրդից ընտրած յատուկ մասնաժողովը, որին յանձնված է լուսաբանել վերջին անցքերի ժամանակ քաղաքիս բնակիչներին հասած վնասները—ունեցաւ իր առաջին նիստը, որտեղ որոշվեց՝ քաղաքային վարչութեան մէջ ունեցած փաստերից դատ առանձին յայտարարութեամբ պարբերական թերթերին առաջարկել, որ իւրաքանչիւր վնասված բնակիչ առանձին ցուցակով ներկայացնէ իր վնասների ցուցակը մասնաժողովին։ Բոլոր տեղեկութիւնները և փաստերը ի մի հաւաքելուց յետոյ՝ մասնաժողովը կը ներկայացնէ մի ամփոփ զեկուցում քաղաքային խորհրդին, որը իր կողմից վնասվածներին բաւարարութիւն տալու համար կը դիմէ ուր հարկն է։ Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերը, պետութիւնը մտադիր է մասնակի բաւարարութիւն տալ վնասվածներին՝ յատկացնելով 2 միլիօն ռուբլի։

Թիֆլիսում ստացված վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Եկատերինօդարում մտադրութիւն կայ արքեպիսկոպոսութիւն հաստատել։ Վրաց եկեղեցու աւտոկեֆալութեան հարցը գրական կերպով լուծվելուց յետոյ այն ծրագրով, որը մշակել է առանձին խորհուրդը։ Կաթողիկոսը պէտք է նշանակվի վրացիներից Թագաւոր-Կայսրի Բարձրագոյն հրամանով։

Երեկ, Օրթաճալում մորթել են Ջիթախովի կինը իր այգում։ Սպանութեան պատճառը յայտնի չէ։ Չարագործները չեն բռնված։

Բագուի և Գանձակի նահանգների շատ տեղերում մորեխ է երևացել, որի դէմ մաքառելու համար բնակիչները խնդրամատոյց են եղել միջոցներ բաց թողնելու։

Մայիսի 18-ին Պետերբուրգից Թիֆլիս են եկել երկու վաշտ երկաթուղային բատալիօնի զինուորներ, 520 հոգուց բաղկացած, որոնք վարժեցված են երկաթուղային գործում, որոնք Կովկասում կազմակերպված երկու վաշտի հետ միասին, զինուորական ինժեներ գնդապետ Ինգերի հրամանատարութեամբ, նշանակված են ամբողջ անդրկովկասեան երկաթուղու ծառայողների փոխարինել հարկաւոր դէպքում։

Բագուի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը ներկայացրել է Կովկասեան Փոխարքային Խաւրեանի, Թաղիևսեանի, Ունանեանի, Շեմախի բնակիչ տէր-Մանուէլեանի ու Բագուի վաճառական Նարաթեանի խնդիրը հաստատելու Բագւում հիմնվող «Բագուի հայոց կուլտուրական միութեան» ծրագիրը։ Միութեան նպատակն է բարձրացնել Բագուի նահանգի հայերի կուլտուրական և տնտեսական վիճակը բացառապէս խաղաղ և լեգալ միջոցներով, օրինակ նոր տարրական դպրոցներ բանալով, գոյութիւն ունեցող հիները բարեփոխելով հանրակրթականի և արհեստականի, մանկական պարտէզներ բանալով և այլն։

Գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցված է «Огни» ամենօրեայ լրագիրը, որը ուղարկվում էր «Возрожденіе» լրագրի բաժանորդներին։ Այդ լրագրի միայն մի համարը լոյս է տեսել և 2-րդ համարից արդէն դադարեցրին։ Յունվարից հաշւելով՝ դա արդէն 11-րդ թերթն է, որ դադարեցնում են։ Վրացերէն «Խմա» (ձայն) լրագիրը, կազմակերպական պատճառներով մի քանի օրով ընդհատվեց։

Մայիսի 19-ի լուսաղէմին, մօտաւորապէս ժամի 4-ին, Ելիզաւետինսկի և Սիմօնօվսկի փողոցների անկիւնում մի խումբ չարագործներ սպանել են Երևանի նահանգի, Նախիջևանի գաւառի Ազնաբերդ գիւղացի Մկրտիչ Խաչատրեան Բարսեղեանցին, որը 4 տարի շարունակ ծառայում էր Թիւնիբէգեանցի մօտ դռնապանի պաշտօնով և յայտնի էր իր քաջ ու անվեհեր բնաւորութեամբ։ Չարագործները 8 տեղից խանջալով վիրաւորել են նրան, մեծ մասը գլխից և մի քանիսը մարմնի վրա. վիրաւորել են ձեռներն ու մատները, ապա, երևի սպանելուց յետոյ, քարշ են տուել 40 քայլաչափ ու ձգել Թիւնիբէգեանցի բակը։ Չարագործները հագած են եղել չերքէզկաներ և երկուսը պլինձակով։ Սպանութեան պատճառները բացատրվում են այսպէս։ Անյայտ չարագործներ անօնիմ նամակներով մի քանի անգամ փող են ուզել Թիւնիբէգեանից, որը անպատասխան է թողել։ Այդ բանը յայտնի էր և սպանված դռնապանին և կրկնապատկել էր իր հսկողութիւնը։ Սրանից մօտաւորապէս 10 օր առաջ Թիւնիբէգեանը իբրև թէ նորից է ստանում անօնիմ նամակ, և նոյն իսկ մի քանի օր յետոյ, գիշերը մի քանի չարագործներ մօտենում են տան պատշգամին, ուզում են կոտրել դուռը ու ներս մտնել, բայց դիմադրութեան հանդիպելով դռնապան Մկրտչի կողմից, թողնում—փախչում են։ Չարագործները տեսնելով, որ իրանց փորձերը անյաջող են անցնում, վճռում են վերջ տալ դռնապանի կեանքին, որին նոյն իսկ հետևում են եղել։ Եւ ահա երբ ժամի 4-ին նա կանգնած է լինում պահպանութեան համար, իբրև հերթապահ—գիշերապահ, 8 հոգուց բաղկացած չարագործների խումբը մօտենում է նրան և պահանջում է տալ Թիւնիբէգեանի տան բանալիները, բայց մերժումն ստանալով ու դիմադրութեան հանդիպելով, սկսում է հարուածել խանջալներով, ապա քարշ տալիս սպանվածին Թիւնիբէգեանցի տան մօտ, գրպանից դուրս հանում բանալիները, բանում բակի դուռը, ներս մտնում, ու իրան էլ ձգում բակի մէջ։ Ապա դուռը ներսից փակելով, բարձրանում են պատշգամբը և ուզում են ներս մտնել Թիւնիբէգեանցի բնակարանը։ Աղմուկի վրա զարթնում է Թիւնիբէգեանցը և սկսում են աղմուկ բարձրացնել, ատրճանակ են արձակում չարագործների վրա, որոնք թողնում են ու փախչում։ Այնուհետև սկսում են կանչել դռնապանին, որոնում են նրան ու տեսնում են ընկած, բակում, սպանված։ Թիւնիբէգեանցի խղճի վրա մեծ յանցանք է ծանրանում. միթէ նա չէր կարող զինել դռնապանին, չէ՞ր կարող պահապանների թիւը աւելացնել, երբ իրան լաւ յայտնի էր, որ կողոպտելու փորձերը շարունակվում են, երբ գիտէր, որ չարագործները հետամտում են դռնապանին, որ իրանց միակ արգելքն էր։

Բագւում հրատարակվող «Трудъ» թերթը մայիսի 14-ի համարում իրան սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան օրգան է յայտարարում։

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. Այս շաբաթ օրվայ (մայիսի 20) նշանակված ներկայացումը («Դօն-Ժուան», դիւերտիսմենտ) —Հալալարի թատրոնում, բարեգործական նպատակով, մի սպանված գրաշարի օգտին, անխուսափելի պատճառներով յետաձգվեց և կը խաղացվի հինգշաբթի, մայիսի 25-ին։ Տոմսակները իրանց ոյժը պահպանում են։

Ինչպէս Քութայիսից հաղորդում են «Ծրօմա» լրագրին, ռումբ ձգելուց յետոյ ձերբակալել են 3 հոգու, որոնցից երկուսը սաստիկ ծեծված են եղել։ Քաղաքում պահակների թիւը շատացրել են։ Ժողովուրդը սաստիկ վախեցած է, բայց մայիսի 18-ից կեանքը սովորական ընթացք է ստացել։

Խաշմի գիւղից գիւղապետ Իոսէբ Իմնաշվիլին միջնորդեց նահանգապետի առաջ խնդրելով թոյլատրել իրան հրատարակելու գիւղացիների համար վրացերէն լեզւով մի շաբաթաթերթ «Халхисъ Хма» «Ժողովրդի ձայնը» անունով։

Բագուի բանտը դիտելուց յետոյ, Բագուի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը յանձնարարեց Բագուի ոստիկանապետին խորհրդակցելու Բագուի նահանգական դատարանի դատախազի հետ, չէ՞ կարելի արդեօք թոյլ տալ բանտարկեալ Գրիգոր Մէհրաբեանցին, որը մեղադրվում է Բագուի նահանգապետ Նակաշիձէի սպանութեան մէջ, շղթաները արձակելու։ (Касп.)

Մայիսի 15-ին, ցերեկվայ մօտ ժամը $3^{1}/_{2}$-ին Թիֆլիսի ինկերակի ուսումնարանի շէնութեան 3-րդ յարկից ինքնասպանութիւն գործելու նպատակով իրան վայր ձգեց փողոցը նոյն ուսումնարանի ինկեր Վ. Պօլավսկին։ Գլուխը դիպել էր քարին և ջարդվել։ Պօլավսկին բոլէապէս մեռաւ։ Ինքնասպանութիւն գործելու պատճառը, ինչպէս երևում է նրա թողած գրութիւնից, կրում է սիրահարական բնաւորութիւն և կապ ունի անձնական փողային հաշիւների հետ։

Մայիսի 18-ին, լոյս 19-ի գիշերը, 5 հոգի անյայտ չարագործներ ժամի 1-ին ներս են խուժում Փոնիկուլյօրի գրասենեակը և ատրճանակները ուղղելով գանձապահի վրա, պահանջում են մօտը եղած փողերը։ Ստանալով 800 ռուբլի, անյայտանում են։

Մայիսի 18-ին, երեկոյեան ժամի 6-ին, Միխայլօվսկի փողոցի վրա 3 երիտասարդներ մտնում են «Կոլխեթիս» ընկերութիւնը, գինի են պահանջում—խմում ու ատրճանակները ուղղելով կառավարիչ իշխ. Վաչնաձէի վրա, փող են պահանջում և ստանալով 46 ռուբլի 60 կօպէկ, անհետանում են։

Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, Ռազգօնի պօստի դէմ ու դէմ գինետուն ունեցող Սիսօևը 18-ի գիշերը տուն չէ վերադառնում։ Ազգականները ոստիկանութեան միջոցով յաջորդ օրը քանում են և տեսնում են արիւնը լճացած յատակի վրա, բայց դիակը չը կայ. հետքը տանում են մինչև Արտիլերիյսկի փողոցը, և այնուհետև չէ երևում։ Չը կայ մինչև այժմ դիակը։

Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում քննութիւնները արդէն սկսվել են։ Մայիսի 27-ին այնտեղ նշանակված է վերջին քննութիւն, երգեցողութիւնից։

Ներկայումս Թիֆլիսի ստատիստիկական յանձնաժողովը զբաղված է Թիֆլիսի նահանգի 1905 թ. հաշիւները կազմելով։ Այդ նպատակով յանձնաժողովը Կովկասի գիւղատնտեսական ընկերութիւնից պահանջել է 1) այգեգործական ուսումնարանի աշակերտների և աշակերտուհիների թիւը, բաժանելու նրան ազգութիւնների, կոչումի և դաւանութեան վրա, 2) ի՞նչ գումար է ծախսվել այդ ուսումնարանի համար և այլն։

Ռուսաց մեղուաբուծական ընկերութեան խորհուրդը Պետերբուրգում, հաղորդում է Կովկասի գիւղատնտեսական խորհրդին, որ նա 1906 թ. յունիսի 30-ից մինչև օգոստոսի 6-ը Պետերբուրգում բաց է անում մեղուաբուծական և պարտիզպանական մի ցուցահանդէս։

Պետական Դումայի բիւջէն մինչև 1907 թէի յունվար ամիսը հաշւած է 1,300,00 ռուբլի։ Այդ գումարից մօտաւորապէս մէկ միլիօնը նշանակված է Դումայի անդամներին իբրև վարձատրութիւն։

«Дума» թերթում տպագրված է հետևեալ հեռագիրը Վարշավայից. «Մայիսի 10-ին, կէլեցկի զինուորական գեներալ-նահանգապետ Ժիլինսկին եկաւ Վարշավա, Ալէքսանդրա Կուլինայի մօտ, որ ապրում էր Սադօվոյ փողոցում, № 10 տանը։ Այդ ժամանակ Օկուլինան տանը չէր։ Նա վերադարձաւ գիշերվայ ժամի 1-ին երկու օֆիցերների ուղեկցութեամբ, որոնք տեսնելով գեներալին հեռացան։ Կէս ժամից յետոյ այն սենեակից, ուր գեներալ-նահանգապետն էր գտնվում Օկուլինայի հետ միասին, երկու գնդակի ձայն լսվեց, և այնտեղից դուրս եկաւ Ժիլինսկին, որը յայտնեց սարսափահար դուրս վազողներին, որ Օկուլինան ինքը իրան գնդակահար արեց։ Քաղաքում բազմատեսակ լուրեր են պտտում, և ամբողջ խօսակցութեան նիւթը սպանութիւնն է։Վկայում են,որ գեներալ-նահանգապետը ինքն է սպանել Օկուլինային։—Լրագիրներին արգելված է որևէ բան գրել այդ սպանութեան առիթով։ Ասում են, որ ոչ մի դատաստանական քննութիւն չէ կատարվելու. չէ անդամահատվելու ու քննվելու սպանվածի մարմինը նոյնպէս։ Տեղական լրագիրները հնարաւորութիւն չունենալով լուսաբանելու այդ դէպքի մանրամասնութիւնները դիմել են գաւառական մամուլին։ Ցուցմունքը ահագին է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, մայիսի 2-ին

Երէկ Հին-Քաղաքում պատահել է այսպիսի մի դէպք. հին-քաղաքացի, բայց տաճկա-հպատակ մի հրէայ դիմում է այնտեղի տաճկաց փոխ-հիւպատոսութեան գաւասին (հիւպատոսի բացակայութեան ժամանակ գաւասներն առհասարակ փոխանորդ են նշանակվում) և խնդրում է, որ իր անհնազանդ որդուն մի թէնբիհ անի (յանդիմանութիւն տայ). Թէնբէհը լինում է բանտարկութիւն մի երկու օրով։ Որդու բանտարկութիւնը հօրը թէև բաւականութիւն է պատճառում, սակայն մօր սիրտը ցաւացնում է. նա վեր է առնում մի մարգիմիւշ (թոյն) և գնում է որդուն այցելութեան. բանտարկվածին տեսնելուց յետոյ, հրէուհին գաւասի կնոջից մի քար է ուզում, որով թոյնը մանրացնում է։ Գաւասի կինը այդ տեսնելով՝ հետաքրքրվում է և հարցնում թէ նա ի՞նչ է և ի՞նչ է անում, որին հրէուհին պատասխանում է, որ ուզում է որդու հետ թունաւորվել և մեռնել—ազատվել միանգամայն իր ամուսնու ձեռքից... Գաւասի կինը սակայն արգելք է հանդիսանում և քիչ յետոյ թէնբէհ առած (խրատված) պատանին արձակվում է և տուն ուղարկվում։

Սա խնդրի մի մասն է. մնում է երկրորդ մասը։

Հրէուհու այդ յուսահատական, նաև սպառնական վարմունքը ազդում է թըքմէու (գաւասի կնոջ) վրա, որը յղի լինելով վիժում է միևնոյն օրը։ Գաւասը դիմում է տեղիս պարսիկ իշխանութեան և գոհացում է պահանջում ոչ պակաս չաղ պատասխանը հրէայից։ Պարսկաց դատարանը գործը չը վերջացրեց, այլ խնդիրը յանձնեց Խօյի Օսմ. հիւպատոսարանին, որը շուտով իր վճիռը կարձակի, ինչ ասել կուզի, ի վնաս խարպէլացու քսակին, որով հայրը՝ որդուն տալիք դասի հետ ինքն էլ մի դաս առած կը լինի...

Մայիսի 4-ին

Բաշ-Կալէում (Թիւրքիա) եղող պարսիկ վաճառականներն իրանց նամակներով տեղեկացնում են, որ տաճիկ իշխանութիւնը Հէքքարիում՝ զօրքը շարժման մէջ է դնում. ինչ որ պատրաստութիւններ են տեսնվում. շշուկներ լսվում են օսմանցիների մէջ թէ Սալմաստի սահմանի վրա էլ սահմանագծային հարց կայ լուծելիք (!) և, պարսիկ վաճառականները զգուշացնում են իրանց ազգակիցներին և հայրենակիցներին։ Միևնոյնը ասվում են նաև Աղբակից եկողները։ Իրա՞. օսմանեան կառավարութիւնը չէ ուզում ներել իր համակրօն պարսիկ իշխանութեան իր՝ որպէս թէ մի փոքր հողաբաժինը իւրացրած լինելու պատճառով և պատրաստութիւններ է տեսնում պարսկի հետ լուրջ գործ ունենալու։ Կասկածելի է, որ նա այդ հանդգնութեան պատիւն ունենայ և իր կողքին տեղի ունեցած դէպքերի նմանութիւններ և իր երկրում կատարվելու՝ և գուցէ աւելի վատթար կերպով առել չունենայ (թող իր դէմն եղած լինի մի տկար պետութիւն, որպիսին է պարսիկը). բայց, կարելի է սպասված Աստուծու դատաստանը մօտեցել է...

Մայիսի 6-ին

Այսօր դարձեալ եկան մի քանի վանեցիներ, փախուստի ճանապարհով—քրդի առաջնորդութեամբ։ Սրանցից մի պատանի պատմեց, որ մազից էին պրծել սպանվելուց։ Բաղադ (առաջնորդ) քուրդը կէս ճանապարհին, փախչող հայերին յանձնում է իրան ծանօթ մի ուրիշ քրդի, որը սահմանն անցկացնի. վերջինս լեռնային մի խուլ տեղում իրան յանձնված հայերին նախ կիսովին թալանելուց յետոյ, զէնքի է դիմում անզէններին արևը մարելու նպատակով միանգամից, բայց հէնց միևնոյն բոպէին, հրաշքի պէս, մի քանի ուրիշ քրդեր վրա են հասնում և սպանութեան գործը գլուխ չէ գալիս բարեբաղդաբար։

Հարցնում եմ, երկրին ի՞նչ դրութեան մէջ է։

—Հայերն էլ, Թուրքերն էլ, աւելի գիւղացի բնակչութիւնները, տնտեսապէս շատ խեղճ դրութեան մէջ են, պատասխանում է պատանին։

Դու խեղճ ես, կարծում ես ամբողջ Տաճկաստանն էլ խեղճ է,—բռնի կատակով ես ասում եմ։

—Գուցէ ճիշտ էք նկատում, ասաց խեղճ պատանին և վրա բերեց.—բայց բոլորի բերանից գանգատ է լսվում իրանց վիճակից։ Գործը պակաս, առևտուր պակաս, հարկերն աւելացած, ապրուստի միջոցներ—հացը են թանգացած, միւս կողմից էլ կառավարութեան խոժոռ—խոժոռ նայուածքը դէպի հայերը, ահա, ընդհանուր դրութիւնը։ Եթէ հնար լինէր, արգելք չը լինէր, ճանապարհին սպանվելու երկիւղը չը լինէր, շատեր պիտի հեռանան. ինչ անենք։—Ականջներովս լսել եմ, տաճիկներից անգամ անիծողներ լինում են օսմանեան սպանիչ իշխանութեան։

Ուրեմն, բռնութիւնը և թշուառութիւնը ծայրայեղութեան են հասել Տաճկաստանում, համարեա բոլոր բնակիչների վերաբերմամբ էլ. ուրեմն, մի ծայրահեղութիւն մի ուրիշ ծայրայեղութիւնը ստեղծելու յոյսի նշոյլներ են նշմարվում, ուրեմն մօտ է պատմութիւնը կրկնվելու։

Յոնհ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Ցուցմունքներ թիւրք զօրքերի մէջ.—«С. Пет. Вѣд.»-ի թղթակիցը Կ. Պօլսից հետևեալն է գրում թիւրք բանակի մէջ կատարված շարժումների մասին։

Թիւրքական բանակում զինուորական կարգապահութեան խանգարելը վերջերս համաճարակի բնաւորութիւն է ստանում. հետաքրքիր են մանաւանդ Իզմիրի զօրանոցներում տեղի ունեցած անկարգութիւնները, երբ ժանդարմները զէնքերը վայր դնելով հրաժարվել են նիւքին ծառայութիւնը կատարելուց։ Կանոնաւոր բանակի մէջ վրդովմունքն աւելի ու աւելի աճում է, իսկ վատ վերաբերմունքի, հագուստի, կերակուրի մասին գանգատները այժմ ամենուրեք են հնչում։ Բարձրաստիճան սպաները աշխատում են խեղդել բողոքը, իսկ փոքրերը զինուորների կողմն են։ Ահա թէ ինչ պատմեց ինձ Իզմիրի զօրքերի ապստամբութեան մի ականատես սպայ։ Պօրտ-Սայիդ գնալիս՝ երբ Եմէնից վերադարձող զինուորները ապստամբվել էին՝ ես գտնվում էի ռուսաց «Ջիխաչև» նաւի վրա։ Իզմիրում՝ որտեղ նաւը կանգնում է մօտ 5 ժամ՝ ես վճռեցի այցելել Թէֆիկ փաշային և նրանից իմանալ Պօրտ-Սայիդի ապստամբութեան մանրամասնութիւնները, որովհետև ապստամբված զօրքերը գտնվում էին մի այնպիսի զօրամասում, որի գեներալը իր բարձր աստիճանին հասել էր ոչ թէ իբրև ազնիւ զինուոր, այլ մատնիչի դեր կատարելով։ Գեներալ-նահանգապետի տունը մտնելիս, ուր գտնվում է և զօրամասի կառավարութիւնը, ինձ զարմացրեց զինուորների մի ամբոխ՝ անկարգ, պատառոտած շորերով և բոպիկ ոտներով... Զինուորներից մի քանիսը ինչ որ բանի համար բարձր վիճում էին, միւսները արևգակի տակ ծուլօրէն տաքանում էին՝ չիբուխներից ծուխի ահագին քուլաներ հանելով։ Մի կողմի վրա կանգնած էին երիտասարդ սպաներ, որոնց կախած յօնքերի տակից աչքերի մէջ փայլում էր բացական տխրութիւնը, ուր զգացվում էր անոյժ բարկութիւն և տանջող հոգեկան կռիւ։ Շնորհիւ անտանելի պայմանների՝ թիւրք զինուորները վճռել էին շպրտել իշխանութեան առաջ իրանց պետական զէնքերը և բարձր բողոքել տիրող ռէժիմի դէմ։ Հոգու խորքում արդարացնելով զինուորներին, նրանք զգում էին իրանց սորոպղրեաների կատարած յանցանքի ամբողջ ծանրութիւնը. Ուրիշ սիրտը ցաւում էր հայրենի բանակի այսպէս դէմորալիզացիայի տեսքից, նրանք պատրաստ էին կոտր-կոտր անել բարձր իշխանութիւնը, որը Իզմիրի զօրանոցներում կատարվածների միակ պատճառն էր... Իզմիրի զօրապահակը 8 ամիս ամսաւճար չէր ստացել... Զօրապետը դուրս եկաւ ապստամբված զինուորների մէջ։

Երբ Թէֆիկ փաշան դուրս եկաւ, կարծես նախօրօք որոշված ծրագրի հիման վրա՝ զինուորները շրջապատեցին նրան. առաջինս դարձաւ դէպի նրանց կարճ ճառով, որով խորհուրդ էր տալիս համբերութիւն և հաւատարմութիւն Սուլթանին։ Զինուորների ամբոխից դուրս եկաւ մի ենթասպայ, որը ձեռքերը կրծքին խաչած մօտեցաւ փաշային և ասաց։

— Փաշա! այստեղ ներկայ գտնվող զինուորներից կէսը իրանց կրծքով պաշտպանել են հայրենիքը, փադիշահին, Մակեդոնիայում և Եէմէնում։ Մեծամասնութիւնը մեզանից վէրքեր ունի իբրև յիշատակ մեր կրօնակիցների դէմ կռւին. մեր գործը չէ մտնել այն անել, թէ ինչպէս փաշաները և վէզիրները շնորհիւ իրանց ոչ մարդկային վերաբերմունքի և կաշառակերութեան առաջացրին Մակեդոնիայի և Եէմէնի ապստամբութիւնները։ Երբ մենք կռւում էինք՝ դուք հանգիստ նստած էիք ձեր հարեմներում, ձեր կանայք և խոհարարները աշխատում էին նախազգուշակել ձեր բոլոր ցանկութիւնները և դուք, հասկանում էք, չէք կարող երևակայել անգամ այն սոսկալի նեղութիւնները, որ մենք կրեցինք սոսկալի արշաւանքի ժամանակ. անօթի, քաղցած, բոպիկ, տկլոր, որովհետև մեր շորերը արդէն քրքրված էին։ Ձեր գրպանները լիքն են մեզանից՝ զինուորներիցս և մեր ընտանիքներից յափշտակված ոսկիներով, դրա փոխարէն՝ ձեզ անյայտ է մօրից հաց խնդրող քաղցած զաւակի լացը, ձեզ անյայտ է մօր կսկիծը, որը չունի այդ հացը և միայն իր արտասուքներին և որդու սովին վկայ ամուսնու տանջանքը։

Մենք չենք եկել ձեզանից և ձեր ընկեր նահանգապետներից ողորմութիւն խնդրելու, որոնք քանդում և կողոպտում են ամբողջ վիլայէթներ. մենք հաւաքուել ենք փադիշահից ռոճված վարձն ստանալու, որը 8 ամիս է չենք ստացել: Մինչև որ լրիւ չը վճարէք՝ մենք այլ ևս չենք ծառայի, իսկ դուք, փաշա... այստեղից չէք դուրս գան...

— Դու խելագարուել ես, սրիկայ, — գոռաց փաշան՝ աշխատելով դուրս գալ զինուորների շրջանից:

— Մի թողէք, մի թողէք—լսվեցին ձայներ ամեն կողմից և իր գլուխը կորցրած փաշան գոռաց սպաներին՝

— Ինչո՞ւ էք կանգնել, էշեր ձերբակալեցէք այս խելագարներին:

— Վիրաւորուած սպաների խմբից մեկը արդէն ուզում էր մերկացրած սրով փաշայի վրա յարձակուել, սակայն ընկերները նրան բռնեցին սաստելով՝

— Մտածի՛ր, արժէ՞ այդպիսի սրիկայի համար մարդասպան դառնալ:

— Ու՞մ է ուզում ձերբակալել, գոռացին զինուորները: Մի՛ թողէք այս զզուելի խոզին: Զինուորները աւելի մօտեցան, սեղմվեցին և փաշային գերեցին:

Այդ ժամանակ բակը մտաւ Նահանգական գանձապահը՝ ոսկու քսակով: Նա երդւում հաւատացրեց, որ չը նայած իր բոլոր ջանքերին՝ միայն մի ամսվայ ռոճիկ կարողացաւ գտնել, բայց միւս ամսվաններին էլ շուտով կը գտնի:

Թիւրքիայում զօրքեր, համարեա թէ ամէն տեղ այս միևնոյն դրութեան մէջ են:

ԱՆԳԼԻԱ

Օտարազգիների մասին օրէնքի նոր գործադրութիւնը: Այդ օրէնքի գործադրութիւնը բաւական մեղմացաւ, պարլամենտում տեղի ունեցած վիճաբանութիւններից յետոյ: Այս տարվայ յունվարին Անգլիա մտան 21986 օտարազգիներ, որոնցից 202 հոգի պահվեցին սահմանագլխում և 89 հոգի զրկվեցին մտնելու իրաւունքից. փետրվարին 22215 եկողներից 132 հոգի պահվեցին և 50 հոգի յետ ուղարկվեցին: Մարտին եկւորների թիւը հասաւ 39815-ի. դրանցից պահվեցին 77 հոգի և յետ ուղարկվեցին 29:

Դպրոցական օրինագիծը և լորդերի պալատը: Լորդերի պալատի ազատամիտ անդամներից մինը, լորդ Պորտսմուտ, այս օրերս մի քաղաքական ճառ արտասանեց, որի մէջ շօշափեց վերին պալամենտի առաջիկայ դերը դպրոցական օրինագիծը անցկացնելու ժամանակ: Նրա կարծիքով, շատ հաւանական է, որ վերին պալատը կը մերժէ բիլլը, ի նկատի ունենալով այն ընդդիմադրութիւնը, որ ցոյց տուեին նրան երկրում: Այդ դէպքում պարլամենտը կարձակվի և դպրոցական օրինագիծը ազատամիտ կաբինէտի նշանաբանը կը դառնայ ընդհանուր ընտրութիւնների ժամանակ: Եթէ այդ ընտրութիւնները նպաստաւոր կը լինեն կառավարութեան համար, այն ժամանակ կամ վերին պալատը պէտք է հպատակվի երկրի կարծիքին, կամ եթէ նա նորից մերժէ բիլլը, կառավարութիւնը ստիպված կը լինի հարց դրել, թէ ինչպէս ազատ է վերին պալատի օպպոզիցիայից: Ուրեմն լորդ Պորտսմուտը գուշակում է սուր ընդհարումն երկու պալատների մէջ և չէ կարելի կասկածել, թէ ում կողմն կը լինէ գերակշռութիւնը:

ԻՏԱԼԻԱ

Կաբինէտի անկումը. Սոննինօի կաբինէտը, որ մի քանի ամսից ի վեր միայն գոյութիւն ունէր, ստիպվեց հրաժարական տալ, մնալով փոքրամասնութեան մէջ երկաթուղիների հարցի առիթով (150 ձայներով ընդդէմ 174-ի): Այդ հարցը, որով ընդդիմադրական կուսակցութեան աջողվեց տապալել մինիստրութիւնը—քաղաքական չէր: Քննվում էր այն հարցը, թէ լեռնային երկաթուղիները պէտք է շուտով յանձնել կառավարութեան: Սոննինօն պահանջեց, որ պարլամենտը անմիջապէս քննէ այդ հարցը, բայց դրա դէմ խօսեցին Գալլօ և Մաջօրինօ պատգամաւորները, առարկելով թէ հարցը շատ լուրջ լինելով, քանի որ շատ մարդկանց շահն է շօշափում, պէտք է շատ զգուշութեամբ քննել, ուստի եթէ կառավարութիւնը քուէարկութեան դնէ այդ ծրագրի քննութեան անյետաձգելիութեան հարցը, նա բիւջէտային հարցը կը դարձնէ քաղաքական: Հարցը քուէարկութեան դրվելով, մինիստրութեան առաջարկը մերժվեց 174 ձայնով ընդդէմ 150-ի: Եւ մինիստրութիւնը ստիպվեց հրաժարական տալ:

ԱՄԵՐԻԿԱ

Լինչելը: Այս օրերս Օկլօհոմում ինքնադատաստանի կամ Լինչի օրէնքի գործադրութեան մի դէպք եղաւ, որ նորից գրաւեց հասարակական կարծիքի ուշադրութիւնը այս բարբարոս սովորութեան վրա, որ չեն կարողանում արմատախիլ անել մինչև այսօր: Սովորաբար լինչման ենթարկվում են նեգրերը և յաճախ սպիտակ կանանց բռնաբարութիւնը նեգրերի ձեռքով ծառայում է առիթ ժողովրդական զայրոյթի զգացման: Սակայն այս անգամ լինչման ենթարկվեց մի կին, որին դրացիները կասկածում էին իր ամուսնուն թունաւորման մէջ: Երբ ամբաստանված կինը մերժեց խոստովանել իր յանցանքը, նրան կախ տուին և պահեցին մի քանի ժամանակ, որ իջեցնեն և հարցաքննութիւնը շարունակեն: Չը տեսնելով նրա կողմից խոստովանութիւն, ամբոխը նորից կախեց նրան և երբ վճռեց, որ նա մեռել է, նրան թաղեցին աղբակոյտի մէջ: Սակայն կինը ուշքի եկաւ և դուրս գալով իր գերեզմանից, յայտնեց իշխանութիւններին իր դէմ գործած բռնութեան մասին:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մայիսի: Նիստը բացվում է 11 ժամ և 45 րոպէին: Նախագահում է իշխան Դոլգորուկովը: Կարդացվում է Արգենտինեան հանրապետութեան շնորհաւորական հեռագիրը: Որոշվում է յանձնարարել պրեզիդիումին հեռագրով շնորհակալութիւն յայտնել: Ապա նախագահը զեկուցանում է անդամների մեծամասնութեան կողմից ընդունված մահվան պատիժը վերացնելու առիթով կազմած օրինագիծը, ստորաբաժանվում է հետևեալ յօդուածների. 1) Սրանից յետոյ Ռուսաց կայսրութեան մէջ մահվան պատիժը վերացվում է. 2) Նախ քան համապատասխան օրինագրքերի վերաքննելը—մահվան պատիժը փոխարինվում է անմիջապէս նրան հետևող ծանր պատիժներով:

Նաբօկովը առաջարկում է օրինագիծը յանձնել անձի անձեռնմխելիութեան հարցով զբաղվող 15 անդամեայ մասնաժողովին, քանի որ պարզ է, որ հարցապնդումներից օգուտ չը կայ:

Նովօդվօրսկին յիշեցնում է, որ մահվան պատիժը աննպատակայարմար է—ինչ տեսակէտից էլ որ նայելու լինենք—այն աստիճան, որ կառավարութիւնը անպէտօրէն խախտում է տասն պատուիրաններից մեկը «մի սպանանէր»... Ամբողջ սրտով ցանկանում է, որ այդ խօսքը շուտով գործ դառնայ:

Լեդնեցկին ցոյց է տալիս, որ սովորական քրէական կոդեկսում մահվան պատժի մասին խօսք անգամ չը կայ, ուստի պետութիւնը գործադրելով մահվան պատիժ—միևնոյն է թէ կատարում է քաղաքական սպանութիւն. Նա պաշտպանում է հրեղէն Մօլօխ, որին մշտապէս զոհեր են հարկաւոր: Դուման—առանց աջ դարձնելու այս այն կողմ—ուղղակի պէտք է իր օրէնսդրական իշխանութիւնը ցոյց տայ: (Ոլացուցիչ և բուռն ծափահարութիւններ):

Պատգամաւոր Լօկօտը առաջարկում է որոշեալ պահանջներով դիմել ներկայ ռեժիմի ներկայացուցիչներին:

Ալադինը առաջարկում է հարցապնդումների խաղը թողնել, որոնց փոխարէն օրէնսդրական կարգով հարկաւոր է վերացնել այն օրէնքները, որոնցով պատիժներ են նշանակում. չը պէտք է կապենք մեզ ժամանակամիջոցներով: Առաջարկում է խնդրել մինիստրներին գալ Դումա, նստել դատարկ աթոռներում և լսել իրանց: Ժողովուրդը չէ հասկանում Դումային. նա կարծում է, թէ Դուման իշխանութիւն ունի,—պէտք է յայտնել նրան, որ մենք էլ վերջապէս համոզվեցինք, որ մենք անզօր ենք. որ մեր և բարձրագոյն իշխանութեան միջև և կանգնած են սոսկ դահճներ, որոնց կողմն է կոպիտ ոյժը, որովհետև նրանք թնդանօթներ և կնդակացիրներ ունեն... (Ծափահարութիւններ):

Գռամատչիկօվը գտնում է, որ օրինագիծը պարզ է և ըմբռնելի և չարժէ նրան յանձնել մասնաժողովին:

Լօմտակօվը առաջարկում է, որ ամենաուշը օրինագիծը պատրաստվի երեքշաբթի օրը:

Պօեարկօվ [illegible] օրինագծի մասնաժողովին յանձնելը անտեղի և աւելորդ է գտնում. կառավարութիւնը ծաղրում է Դուման. «Ապրելով գաւառում, ես չէի հաւատում լրագիրներին և միայն Պետերբուրգում տեղեկացայ, որ կառավարութիւնը ամբարտաւանացել է: Մահվան պատիժը մացրված է առանց որ և է օրէնքի հիման վրա, որով նշանակում է, որ նրա վերացումը կրկին առանց օրէնքի պէտք է կատարվի: Պէտք է մենք մեր վճիռը ներկայացնենք կայսրին և նա կստորագրէ «Թող լինի այդպէս» և եթէ մահվան պատիժը չը վերացվի, այն ժամանակ պէտք է Պետերբուրգից մեր տները ցրվենք: Անպատուաբեր կը լինի մեզ համար այստեղ մնալ և փող ստանալ. (Գիւղացիները ծափահարում են:)»

Նաբօկովը յիշեցնում է, որ Դումայի որոշումները ժողովի իղրակցութիւն չէ, անհրաժեշտ է այդ գործը յանձնել մասնաժողովի, հակառակ դէպքում ոչինչ դուրս չի գայ:

Ապա խօսում է Զաբօլօտնին, որ առաջարկում է, մահվան պատիժը վերացնելու առիթով կազմված օրինագիծը անյապաղ ներկայացնել Բարձրագոյն իշխանութեան ի հաստատութիւն:

Սեդելնիկօվը յայտնում է, որ Դումայի օրերը հաշված են, նա պէտք է մեռնի. բայց ժողովրդին կտակէ մի շարք օրինագծեր:

Եւսօվը երբ ասում էր թէ Ռիգայի մահվան պատիժը մի ապտակ է Դումային—կանգնեցնվում է նախագահից. առաջարկում է նահատակների յիշատակը յարգել ոտքի կանգնելով:

Կուզմին Կարավաևը գտնում է, որ այդ պատիժների և շարունակվող քաղաքական սպանութիւնների մէջ կապ կայ անշուշտ: Քաղաքական սպանութիւնները սկզբում եզակի էին, իսկ այժմ նրանք համաճարակի բնաւորութիւն են ստացել: Մահվան պատիժներով անկարելի է նրանց դէմ կռվել. կռվել կարելի է միայն նրանց պատճառները հեռացնելով, որոնց թիւն պատկանում է և մահվան պատիժը: Նրան անհրաժեշտ է վերացնել:

Կօվալեվսկին խօսում է մահվան պատժի պատմութեան մասին. ասում է, որ նա այժմ ամենուրեք վերացվում է, սկզբում քաղաքական ապա և քրէական յանցանքների համար: Մեզ մօտ ընդհակառակն է: Այժմ Դուման մահվան պատիժը պէտք է դատապարտէ ընդմիշտ, որին, անտարակոյս, Պետական Խորհուրդը աջակցութիւն ցոյց կը տայ:

Ապա խօսում են Ռօդիչևը, Լևինը, Գրեդեսկուլը: (Սրանց արտասանած ճառերը կը հեռագրվեն):

Նախագահը քուէարկութեան է առաջադրում Նաբօկովի առաջարկը՝ մահվան պատիժը վերացնելու օրինագիծը մասնաժողովին յանձնելու, նրան անյետաձգելի ճանաչելու և նրա քննութիւնը հետևեալ շաբաթում նշանակելու մասին: Առաջարկութիւնը ընդունվում է միաձայն:

2½ ժամին 1 ժամով ընդմիջում է յայտարարվում:

Նախ քան ընդմիջումը, եղած ճառերի բովանդակութիւնը: Զաբօլօտնուց յետոյ Ռօդիչևը յայտնում է. «Այստեղ, մահվան պատիժը վերացնելու հարցը քննելիս բոլորը մի սիրտ, մի հոգի են հանդիսանում. բայց այստեղ կասկած յայտնեցին Դումայի ոյժի մասին, թէ նա անկարող կը լինի իր պահանջած օրէնքը մտցնել տալ: Այդ մտավախութիւնը այստեղ անտեղի է: Դումայի ոյժը՝ իր պարտքը, ժողովրդի իշխանութիւնը գիտակցելու մէջ է կայանում միայն: Մահվան պատժի գործը կանհետանայ, երբ Դուման կը վերացնէ մահվան պատիժը. Դուման պէտք է յիշէ, որ կռիւը կարող է շարունակվել ոչ մի օր, բայց և այնպէս վերջում ինքը կը յաղթէ: Այստեղ երկչոտութեան և յուսահատութեան տեղը չէ. Դուման չը պէտք է յետ կանգնէ պատահած արգելքներից:

Լևինը գտնում է, որ պարլամենտի միակ զէնքը պէտք է կայանայ օրինագծերի մէջ և խօսէ այդ լեզուով: Ոչինչ չի դուրս գայ, որ Դուման հարցապնդումներ անէ մինիստրներին, նրանց հետ հակաճառութեան մէջ մտնէ. նրա գործը պէտք է լինի օրէնսդրական, չը մտածելով, որ թերևս արժէքն բերան: Այդ երկիւղը թուլացնում է Դումայի եռանդը: Պէտք է աշխատել, օրէնքներ մշակել:

Գրեդեսկուլը ասում է, որ Դումայի դերը կայանում է, ժողովրդական շարժումը ղեկավարելու մէջ: Մինչև այժմ քաղաքական տերրօրը գործում էր ժողովրդի վրա միայն սարսափ ազդելու համար: Այժմ մեզ ասում են, որ վերածննութեան ժամը հասել է: Ուրեմն այժմ մահվան պատիժների մասին խօսք լինել չէ կարող, որ կարողանար արդարացվել, իբրև սարսափ ազդելու միջոց: Հռետորը կողմնակից է մահվան պատիժը անպայման վերացնելուն:

Նիստը վերսկսվելուց յետոյ զեկուցվում են Դումայի անդամների ընտրութիւնները ստուգող բաժինների որոշումները, կարդացվում են Դումայի անդամ Վօլկօվի անունով Իրբիտից խփած հեռագիրը, և Պօլտավայի նահանգից ստացած հեռագիրները: Առաջին հեռագրում խնդրում են հարցապնդել ներքին գործերի մինիստրին մի քանի անձանց ադմինիստրատիւ կարգով աքսորելու առիթով. երկրորդ հեռագրում խնդրվում է հարցապնդում անել մինիստրների խորհրդի նախագահին Պօլտավայի դպրոցի տեսչի և նրա օգնական Տեալին պատգամաւորներին ճանապարհ ձգելու համար պաշտօններից արձակելու առիթով: Որոշվում է այդ հեռագիրները յանձնել [illegible] զբաղվող մասնաժողովին:

Ապա զեկուցվում է այն առաջարկը, որ արված էր նոյեմբերի 17-ի յետոյ իրանց ծառայութիւնը ի չար գործադրած պաշտօնական անձանց գործերը քննելու համար, մի առանձին մասնաժողով նշանակելու առիթով:

Կօվալեվսկին խօսում է յօգուտ այդպիսի մասնաժողով հաստատութեան: Քարտուղարը զեկուցանում է, որ նախագահի, քարտուղարի և սրա օգնականներից մեկի երեկվայ նիստին պարզվել է, որ անհնարին է կազմել մի այնպիսի նախագիծ, որի համաձայն կարելի լինի Դումայի հաշւետուութիւնը Ռուսաստանի շինական և շրջանային բոլոր վարչութիւններին ուղարկել. այդպիսի նախագծի համար հարկաւոր կը լինէր տարին ծախսել մեկ միլիոն րուբլի: Խորհրդակցութիւնը հնարաւոր է գտել հաշւետուութիւնը ուղարկել միայն 300 հաստատութիւնների:

Ապա Դուման անցնում է ագրարային հարցի քննութեան:

Պետրաժիցկին մի ընդարձակ ծրագրային ճառ է արտասանում: Հռետորն ասում է. «Ես փաստաբան եմ ոչ միայն կոչումով, այլ և իմ համոզմունքով և անհրաժեշտ եմ գտնում, որ կամայականութիւնը վերացվի: Այդ տեսակէտից չեմ կարող առարկել հողերի ստիպողաբար գրաւման սկզբունքին, եթէ այդ պահանջում է պետական և հասարակական օգուտը. բայց չի կարելի մտածել որ կաջողվի ագրարային հարցը լուծել. կարելի է միայն հիւանդութիւնը բուժել»: Հռետորը բնորոշում է նախկին ռեժիմի քաղաքականութիւնը, որ մի նպատակ ունէր միայն—պնդացնել գիւղացիներին հողի վրա, թոյլ չը տալ նրա մէջ լուսաւորութիւն տարածել և քայքայել նրանց տնտեսական ոյժերը: Այդ բոլորը պէտք է ոչնչացնել: Բայց բարենորոգումը կապված է զոհերի հետ: Չը պէտք է մոռանալ, որ նա կը վերաշինէ երկիրը, դարձնելով նրան գիւղացիական, տալով նրան մանրողի պահպանողականութեան բնաւորութիւն: Պէտք է հոգալ կուլտուրականութեան մասին, որը այդ դէպքում թերևս կտուժի: Ապա խօսում է իշխ. Վօլկօնսկին, որ բացատրում է թէ իր ասած հաշւով Ռեազանի և Տամբօվի նահանգներում մասնաւոր սեփականական հողերը գիւղացիներին բաժանելու համար, նոյն իսկ իւրաքանչիւրին մեկ դեսեատին հաշվելով—չի բաւականանայ, որի համար առաջարկում է տալ հող միայն այն անձանց, որոնք հող չունին՝ և հողը տալ ոչ թէ շահագործելու համար, այլ իբրև սեփականութիւն. արդար կը լինէր, որ 300—1200 դ. հող ունեցող մասնաւոր սեփականատէրներից առնվէր ոչ աւելի քան 3-րդ մասը:

Պրիսեցկին յայտնում է, որ հողերի գրաւումը նա կարելի է համարում միայն այն դէպքում, երբ գրաւվի բոլորից այն սկզբունքի հիման վրա, որ հողը պէտք է պատկանէ միայն աշխատաւոր մասսաներին:

Պր. Գերցենշտէյնը մի ընդարձակ ճառով, որ շարունակ ընդհատվում է ծափահարութիւններով,—խիստ քննադատութեան է ենթարկում կառավարութեան և նրա բոլոր մարմինների—ֆինանսների, երկրագործութեան մինիստրութիւնների, պետական և գիւղացիական բանկերի և խնայողական գանձարանների ֆինանսական և տնտեսական ձեռնարկութիւնները: Հռետորը բողոքում է մուժիկի կուլտուրայի վրա յարձակվելու դէմ, օրինակ բերելով գիւղացիական երկրագործական երկիր և ժողովրդական 100 համալսարաններ ունեցող Դանիային: Ապա հռետորը յենվելով սահմ.-ռամկ. կուսակցութեան ծրագրին—յայտնում է, որ կուսակցութիւնը ոչ միայն չէ սահմանափակվում հողերի լրացուցիչ բաժանմամբ, այլ և հոգս է տանում մանր փոխատուութիւն կազմակերպելու և բանուորների դրութիւնը բարուքելու համար: Նա չէ հասկանում հողերի ստիպողաբար գրաւման դէմ կառավարութեան ցոյց տուած ընդդիմադրութեան իմաստը, այն կառավարութեան, որը արևմուտքում ռուսաց տարրը ուժեղացնելու շահից դրդված բռնութեամբ այնքան յափշտակութիւններ գործեց: Հռետորը ընդդիմախօսում է Պետրաժեցկուն, պնդելով որ վերջինս խօսում էր իր անունից է միայն, ոչ թէ կուսակցութեան անունից: Նա եզրափակում է, որ գիւղացիական բանկից ոչինչ չի կարելի սպասել, քանի որ տուրքերի վճարումը առաջ է բերում մի ահագին շահ, որից օգտվում են կալուածատէրերը և վաշխառուները և ոչ թէ մուժիկը: Հողերի ստիպողաբար գրաւման սկզբունքը համապետական սկզբունք է. մի քանի առանձին տեղերում ընդհանուր նորման կարող է փոփոխվել, բայց հողերի ստիպողաբար գրաւման սկզբունքը անդրդվելի է: (Բուռն և անվերջ ծափահարութիւններ):

(Պրոֆեսօրը նստում է իր տեղը. իսկ օվացիաները շարունակվում են աղաղակներ. «կեցցէ» «բրաւօ»—գլխաւորապէս գիւղացիների աթոռներում):

Պետրաժեցկին բացատրում է, որ ինքը խօսել է ժողովրդական ազատութեան կուսակցութեան անունից: Գերցենշտէյնը իզուր նրա վրա յարձակվեց:

Դուման որոշում է նիստը փակել:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մայիսի: Սենատին տուած Բարձրագոյն ուկազով հրամայված է Տօմսկի նահանգում Դումայի անդամների ընտրութիւնները կատարել մայիսի 30-ին: 1905 թ. մայիսի 15-ին Եապօնական ծովում կանխադիտաւորութեամբ «Бѣдовый» ականանաւը եապօնացիներին յանձնելու համար զինուորա—ծովային դատարանին են յանձնվում փոխ ծովակալ Ռօժեստվենսկին, առաջին կարգի կապիտան Կլապէ դէ Կօլէն, նաւատորմային նաւուղղի զօրաբանակի գնդապետ Ֆիլիպովսկին, երկրորդ կարգի կապիտաններ՝ Բարանով և Սեմենով, լէյտենանտներ՝—Կրժիժանովսկին, Վիւյճեյավ, մեքենագործ Իլիստովիչը, միչմաններ Դեմչինսկին և Օսպրիէն-դը-Լասին:

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, 17 մայիսի: Սէյմի նոր կանոնադրութեան կառավարչական նախագիծը խմբագրական աննշան փոփոխութիւններով ընդունվել է Սէյմի բոլոր դասերից. Նոր կանոնադրութիւնը ապահովում է ժողովրդի ամենալայն մասնակցութիւնը ընտրութիւններին և կանանց ընտրողական իրաւունք է պարգևվում: Ընտրութիւնների իրաւունքով օգտվում են 23 տարեկան անձինք թէ այր և թէ կին, մտցնվում է միպալատեան սիստեմ, որով սէյմի պաշտօնեաների ըստ դասերի նախկին խմբաւորումը վերացվում է:

ՎԱՐՇԱՎԱ, 17 մայիսի: Իշխանութիւններին զէնքով ընդդիմադրելու և ոստիկանապետի կեանքի դէմ մահափորձ համար ոմն գիւղացի Մաշեվսկի զինուորական դատարանի վճռով կախաղանի է դատապարտված:

ԿԵԼՑԻ, 17 մայիսի: Գիշերով Մօլօգէլչի աւուրաբաժանում կողոպտված են պօստային բաժանմունքը և պետական գինու պահեստը:

ՄԻՆՍԿ, 17 մայիսի: Ազատել են քաղաքական յանցաւորներ երկրաչափ Սիրկինին և երկաթուղային կառավարիչ Գուրեվիչին:

ԲԵՐԼԻՆ, 17 մայիսի: Ուդէլի վարչութեան՝ ռուսաց անտառների վաճառման առիթով, «Ֆրանկֆուրտեր-Ցեյտունգը» ամենաարժանահաւատ աղբիւրից տեղեկութիւն է ստացել: Այդ տեղեկութիւնը, ինչ չափով որ վերաբերում է Մէնդելսօն բանկային տանը—բոլորովին հիմքից զուրկ է: Անկախ այդ բանից այդպիսի վաճառման մասին վճռական ոչինչ յայտնի չէ Բերլինի անտառարդիւնագործող շրջաններում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մայիսի: Ժողովրդական ազատութեան կուսակցութեան Դումայի ֆրակցիան այսօր Պետական Դումա է մացրնելու մահվան պատիժը վերացնելու համար իր կազմած օրինագիծը: 72 մալօրոս անդամները Դումայում կազմել են քաղաքական մի առանձին կուսակցութիւն: Կիրգիզ անդամները միացել են Դումայի աւտօնոմիստների ֆրակցիային: Վերջինս մտադիր է Պետերբուրգում հիմնել իր քաղաքական կլուբը: Դումայի աշխատաւորների խմբակը վերջնականապէս ընդունել է հետևեալ որոշումը, որ եզրափակել է ագրարային օրինագիծը մշակելիս: «Նադելի և մասնաւոր սեփականութեան հողերը, որոնց չափը սովորական աշխատանքի նորմայից չէ անցնում, մնում են նախկին դրութեան մէջ և նրանց այժմեան տէրերի ձեռքին: Իսկ մնացած բոլոր հողերը կազմում են հողային մի ֆօնդ և լինելու են հասարակական տրամադրութեան տակ»:

19 մայիսի

ԲԵՐԼԻՆ, 18 մայիսի: Լանդտագի և րեյխստագի լեհ պատգամաւորները ուղարկեցին Դումայի լեհ պատգամաւորներին շնորհաւորական հեռագիր, որի մէջ ցանկութիւն են յայտնում, որ պատգամաւորները կազմեն լեհերից մի առանձին ֆրակցիա, որը պէտք է հետամուտ լինի ոչ սոսկ բարոյական գործունէութեան:

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 18 մայիսի: «Владивос. Листокъ»-ում տպած մի յօդուածի համար Պէրլակեվիչը զինուորական դատարանի վճռով աքսորի է դատապարտված:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մայիսի: «Օրէնքների ժողովածուում» հրատարակված է, որ Ուրալսկ, Տամբօվ և Կօզլով քաղաքներում և սրանց գաւառներում, ինչպէս և Գրիազա կայարանում զինուորական դրութիւնները վերացված են. վերացվում է նաև յիշեալ քաղաքների մնացած տեղերում մտցրած արտակարգ ուժեղացրած պահպանութիւնը. իսկ Տամբօվեան նահանգը հրատարակված է խստացրած պահպանութեան մէջ:

ՄԱԴՐԻԴ, 17 մայիսի: Կայսերական հարսանեաց հանդիսի պալատ վերադառնալու ժամանակ կայսրի կառքի մօտ ռումբ նետվեց:

ՄԻՆՍԿ, 18 մայիսի: Կազմվում է հիւսիսարևմտեան Ռուս-Վէչեայի մասնաճիւղ, որ նպատակ ունի միացնել համայն ռուս ժողովուրդը, պաշտպանել ռուս ժողովրդի շահերը և զարգացնել նրա քաղաքացիական ինքնաճանաչութիւնը:

ՎԱՐՇԱՎԱ, 18 մայիսի: Զարագործների յարձակումները այս կամ այն հաստատութեան վրա—շարունակվում են: Զօրքերը ամարանոց են գնացել. փողոցներում պահակախմբեր չեն նկատվում:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՋԻՒՕՎԱՆԻ—9½—10 ժ. ոսկր. ներքին և ներվային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳԶԵԼՐԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Պ. ԽԱՐԱԶԵԶԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ե. Գ ԱՐԵԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: [illegible] և օպերացիայի համար սենեակներ:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նախասարդեան

ԱԶԱՏ ԲԵՄ
Ազգային, գրական և քաղաքական լրագիր
Կը հրատարակուի չորեքշաբթի և շաբաթ օրերը Ալեքսանդրիա (Եգիպտոս):
Հասցէն՝ «Azad Pem», Boite postale 439 Alexandrie (Egypte): 5—5

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով).

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Առանձ.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 16 ր. գիշ.
Ալեքսանդրոպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալեքսանդրոպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կր հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

սրանով պատիւ ունի հրաւիրելու պ. պ. բաժնետէրերին տարեկան ընդհանուր ժողովի, կայանալու է ներկայ 1906 թւի մայիսի 21-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին ընկերութեան գրասենեակում, Սերգիեվսկայա փողոց, տուն Փրիդօնեանցի, № 7.

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Անցեալ 1905 թւի հաշւի և հաշւեկշռի քննութիւնն ու վաւերացումը, վարչութեան վերստուգող յանձնաժողովի զեկուցումների հետ. նոյնպէս ծախսերի նախահաշւի և ընկերութեան գործունէութեան ծրագրի քննութիւնը 1906 թւի համար:

2) Ընկերութիւնը ակցիոներական դարձնելու հարցը:

3) Վարչութեան մի անդամի (§ 9), վերստուգող յանձնաժողովի երեք անդամի և երեք փոխանդամի ընտրութիւնը (§ 21).

Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատճառով չը կայանայ, երկրորդ անգամ նշանակվում է նոյն տեղը, մայիսի 28-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, որ կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29).

Տպագրված հաշւը և բաժնետէրերի ցուցակը կարելի է ստանալ ընկերութեան գրասենեակում: (10, 16, 20) 3—3

Լոյս տեսաւ
«ԿԵԱՆՔ»-ի № 10 հետևեալ բովանդակութեամբ
Ռուսաստանի Սօց.-Դեմ. բան. կուսակցութեան IV համագումարի առթիւ:—Եկեղեցական սահմանադրութեան առթիւ:—Իրագործելի՞ է արդեօք Անդրկովկասի ֆեդերացիան:—Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան:—Հանքահանը (բանաստ.):—Դպրոցական խնդրի շուրջը:—Ռուսաստանի Ս.-Դ. բան. կուսակցութեան և ազգային Ս.-Դ. կազմակերպութիւնների միութեան պայմանների նախագիծը:—Գործարանական կեանքից թղթակցութիւններ:—Մամուլի շուրջը:—Ներքին տեսութիւն:—Արտաքին տեսութիւն:—Խմբագրութեան կողմից:—Պօստարկղ:—Յայտարարութիւններ:
Հատով կարելի է ստանալ «Կեանք»-ի խմբագրատանը (Чавчавадская № 4) և լրագրավաճառների մօտ: 1—1

ԱՃՈՒՐԴ
Զգրաշէնի եկեղեցու երէցփոխը յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ երկուշաբթի մայիսի 22-ին առաւօտեան ժամը 12-ին նոյն եկեղեցու գաւթում նշանակված է աճուրդ կապալով տալու եկեղեցապատկան այգին, իր երեք սենեակով և գոմերով, որը գտնվում է 6-երրորդ քաղաքամասում, Սէյիդաբադ կոչված տեղում, սուրբ Սարգսի մօտ, Վարանցօվսկի փողոց: Պայմանների մասին դիմել երէցփոխ պ. Ալեքսանդր Քալանթարեանցին. ամեն օր ժամը 6-ից մինչև 7-ը, երեկոյեան Զգրաշէն եկեղեցու գրասենեակում:
(շ. կ.) 1—2

ԳԻՄՆԱԶԻԱՒԱՐՏ ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ ցանկանում է ունենալ դասեր ամառանոցում: Հասցէն. Красногорская 12. գիմնազիստկային, ժամը 2—4½:
(շ. ե.) 1—2

Ցանկանում եմ լինել որ և է շինութեան ԿԱՌԱՎԱՐԻՉ կամ ստանձնել, ԿՕՆՏՈՐՇՉԻԿԻ, ԿԱՍՍԻՐԻ կամ մի որ և է յարմար պաշտօն: Հասցէն՝ 1-ая Гончарная ул. д. Башинджагова № 5, М. Теръ-Багдасарянцу.
1—2

Գանձակի նախկին
„ՑԵՆՏՐԱԼ"
հիւրանոցը վերջին հայ-թուրքական ընդհարումների պատճառով ՏԵՂԱՓՈԽՎԵԼ է իր բոլոր փառաւոր կահ-կարասիքով Թիֆլիս, Պուշկինսկայա փողոցը, նոյն
„ՑԵՆՏՐԱԼ"
մակագրութեամբ. հիւրանոցի տէրը հրաւիրում է յաճախորդների ուշադրութիւնը՝ տալով գոհացուցած մաքուր սենեակներ իր բոլոր յարմարութիւններով. սենեակների գները 80 կօպէկից մինչև 2 րուբլի:
Ալեքսանդր Յարութիւնեանց
(կ.հ.) 8—100

„Գուտտենբերգ"
գրախանութի հրատարակութեամբ
Լոյս տեսաւ
ՍՏ. ՊԱԼԱՍԱՆԵԱՆԻ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ
(Մասն ա. բ. և գ.)
Հինգերորդ տիպ, գինն է 75 կ., պոստի ծախսով 1 րուբլի:
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гутенбергъ» Г. И. Галустяну. 3-5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ նա վարձով է տալիս Բօրժօմում գտնվող կահաւորված երկյարկանի ամառանոցը 4 սենեակ վերևի յարկում և 5 սենեակ ներքևի յարմարութիւններով, նախկին Արեսալամօվի, որը այժմ պատկանում է Թիֆլիս քաղաքին: Պայմանների համար դիմել վարչութեան 4-րդ բաժանմունքին, ամեն օր, բացի տօն օրերից, ցերեկվայ ժամը 10—2 ժամին:
5—3

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»
Միայն Միխայիլ Լեբեդևի
„Этикетъ утвержденъ прав." մակագրութի

Այս միջոցը մի քանի օրում

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում:
10, 20, 30 3—40

Բ Ժ Ի Շ Կ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համա 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօ սպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թ մամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից №
(ա. օ.) 152—300

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Մ. Պ. ՋԱԽԱՐԲԵԿԵԱՆ
Ներքին եւ ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12 և երեկոյեան ժամը 6—7: Լերմոնտօվսկայ փողոց, տուն № 16:
(ա. օ.) 24—50

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ
Կիրակի, մայիսի 21-ին 1906 թ. կը տե փոխվի իր ամառային շինութիւնը, ուր, օրը, ցերեկվայ ժամը 3-ին, անդամների և դիղատների և նրանց ընտանիքների հա կը լինի ընդհանուր ճաշ 1 ր. 25 կօպէկ ա մէկից, առանց գինու: (ուր.շ.կ) 1—3

Լոյս տեսաւ
„Ս Ա Փ Ր Ի Չ"
Գրական, հումոր—սատիրական ամսաթեր II համարը և ուղարկվեց բաժանորդներին.
Բովանդակութիւն.
1) Կարմիր լէյտենանտ Շմիդտի անմահ յիշատակին: 2) Իսկական ռուս մարդու հերքհեռագրական սուտ լուրերի համար: 3) քի ձմեռը, (կարմիր գրքից): Երազ: 4) աղան և Թուրք Ալին: 5) Ռուս ադմինիստրատորը արտասահմանում: 6) Երջանիկ սինները և ռէակցիան: 7) «Սափրիչի» րութիւնից՝ մեր աշխատակիցներին: 8) Նակաշիձէի նամակը գէն. Տակայշվիլի Տարտարոս 6091 թ. Իժի թագաւոր 3-րդ օրը: 9) Մանր լուրեր: 10) Ա կովկասցիք (Գոլիցինի բողոքը):
ՆԿԱՐՆԵՐ
1. «Սափրիչ», 2. Բիւրօկրատիայի վերջին ճիգը (Թափուղ տերևներ): 3. Ռուսկական դպրոցում (9 պատկեր): 4. Ժամանակակից կրկէսում: 5. Վերածնութեան գարուն: 6. Ահա թէ՝ որտեղ է արդարութիւնը: 7. Փորտ-Արտուրի հերոսները հայկական անկւն գիւղերում:
Երկու պրէմիայով «Սափրիչի» տարեկան բաժանորդագինն է 2 րուբլի Ռուսաստանում, իսկ արտասահմանում՝ 2 րուբլի 50 կօպ.: Առանձին համարը 15 կօպէկ:
Բաժանորդագրութիւնը շարունակվում է: Խմբագրութեան հասցէն՝ С. Петербургъ Казанская 46—18. редакція «Сапричъ». 2—2

ՕԺԱՆԴԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿ
Մայրենի լեզուի
կազմեց Յ. Գասպարեանց
Գինն է 7 կօպ.
Վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում: 2—3

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадат. ул. № 15